2022, ՕԳՈՍՏՈՍ Ա, ԹԻՎ 15 (611)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց արեւելյան թեմի ուխտավորներին

Օգոստոսի 4-ին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց արեւելյան թեմի Բոսթոնի շրջանի Հայփոյնթ համայնքի ուխտավորներին՝ առաջնորդությամբ հոգեւոր հովիվ Տ. Վարդ քհն. Գյոզալյանի:

Հանդիպման սկզբում տեր հայրը ներկայացրեց ուխտավորներին՝ հայցելով Նորին Սրբության օրհնությունը:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու պատգամը փոխանցեց ուխտավորներին՝ կարեւորելով ուխտագնացությունների կազմակերպումը դեպի Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, որոնք նորոգում են հայորդիների ազգային, հոգեւոր ապրումները՝ հաղորդ դարձնելով սեփական ինքնությանն ու հոգեւոր արժեքներին: Զրույցի ընթացքում Հայոց Հայրապետը նաեւ անդրադարձավ Արցախում առկա իրավիճակին եւ հայ ժողովրդի առջեւ ծառացած մարտահրավերներին՝ վստահություն հայտնելով, որ հայորդիները լավատեսության ոգով եւ զորեղ հավատքով կհաղթահարեն բոլոր դժվարությունները:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր մասնավոր գնահատանքն ու օրհնությունը բերեց Տ. Վարդ քհն. Գյոզալյանին նախանձախնդիր ու նվիրյալ ծառայության համար:

Վեհափառ Հայրապետը պատասխանեց նաեւ ուխտավորների հարցերին, որոնք վերաբերում էին Մայր Աթոռի առաքելությանն ու գործունեությանը:

Վերափոխման տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Օգոստոսի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Սուրբ Մարիամ Աստվածածնի վերափոխման տոնը:

Բերկրառատ օրվա առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, Ս. Գայանե վանքում մասնակցեց Պատարագի սրբազան արարողությանը: Պատարագիչն էր Մայր Աթոռի վանորեից տեսուչ Տ. Արտակ եպս. Տիգրանյանը:

Ներկայացնելով տոնի խորհուրդը՝ պատարագիչ սրբազանը մասնավորապես ընդգծեց. «Վերափոխման հիշատակի այս տոնը մեզ կարեւոր պատգամ է փոխանցում. լինել տեր եւ հնազանդ Աստծու կամքին: Աստվածածինը մեզ՝ ամենքիս, իր կյանքի կարեւորագույն պատգամներից մեկն է փոխանցում՝ Աստծու խոսքին, ավետարանական պատգամին կատարյալ հնազանդությամբ կյանք ունենալ: Սուրբ Աստվածամոր օրինակով կոչված ենք հնազանդվելու երկնավոր Հորը, կոչված ենք հավատքով դառնալու Աստծու լույսի կրողներն ու այն տարածողները, որպեսզի աշխարհը եւ մենք խավարի մեջ չմնանք»:

Վերջում Արտակ սրբազանը հայցեց Տիրամոր բարեխոսությունը մարդու եւ Աստծու հաշտության համար՝ պատգամելով վերափոխվել ու մեր անձերը աղոթքով սրբագործել:

Սուրբ Պատարագի ավարտից հետո եկեղեցական թափորը Ս. Գայանե վանքից ուղղվեց դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սուրբ Տրդատի բաց խորան, որտեղ, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց «Խաղողօրհնեքի» հանդիսավոր կարգը: Օրհնված խաղողի ողկույզները բաժանվեցին հավատավոր ժողովրդին:

Հոգեհանգստյան կարգ

Օգոստոսի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Ս. Հովհաննես Մկրտիչ եւ Ս. Վարդան մատուռ-մկրտարանում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ օգոստոսի 14-ին Երեւանի «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով զոհվածների հոգիների խաղաղության համար:

Մինչ արարողությունը Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային բաժնի տնօրեն Տ. Վազգեն եպս. Միրզախանյանը, անդրադառնալով «Սուրմալու» առեւտրի կենտրոնի աղետալի իրադարձությանը, հորդորեց հայորդիներին միասնական լինել եւ այս ծանր ու դժվարին փորձությունը հաղթահարելու համար աջակցել միմյանց:

Եկեղեցականաց դասը եւ ներկա հավատացյալ ժողովուրդն աղոթք բարձրացրին զոհվածների հոգիների հանգստության, նաեւ պայթյունից տուժածների շուտափույթ ապաքինման համար:

Նոր նշանակում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ սույն թվականի օգոստոսի 9-ից Տ. Ներսես աբդ. Հարությունյանը ծառայության է կոչվել Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակությունում՝ որպես Միլանի (Իտալիա) հոգեւոր հովիվ:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Աստվածաշունչը՝ աղքատների մասին

«Երանի՛ ողորմածներին, որովհետեւ նրանք ողորմություն պիտի գտնեն»

(Մատթ. Ե 7):

«Ուխտ»-ը եւ «օրենք»-ը Սուրբ Գրքի առաջին մասի՝ Հին Կտակարանի կարեւորագույն հասկացություններն են, օրենսդրական գրքերը՝ դրա առանցքը, իսկ մնացյալ՝ պատմական, իմաստության եւ մարգարեական գրքերը լրումն ու մեկնություններն են: Այսպես՝ պատմական գրքերի նպատակը ոչ միայն դեպքերի ճշգրիտ նկարագրությունն է, այլ նաեւ պատմության փիլիսոփայության բացահայտումն Ուխտի՝ Աստծու եւ Իսրայելի, իսկ հետագայում նաեւ՝ ի Քրիստոս բովանդակ մարդկության հետ փոխադարձ հարաբերությունների լույսի ներքո: Աստված ժամանակ առ ժամանակ միջամտում է մարդկության պատմությանը: Մարգարեները՝ Տիրոջ խոսնակները, դետ էին կարգված Իսրայելում եւ օրենքի տեսանկյունից էին հետեւում հասարակական ու բարոյական կյանքին՝ հանդիմանելով, ժողովրդին ապաշխարության կոչելով, գալիք պատիժների մասին զգուշացնելով կամ ավետիսները հայտնելով: Իմաստության գրքերի գլխավոր նյութը կրոնաբարոյական ճշմարտություններն են, այսինքն՝ օրենքը, բայց այն տարբերությամբ, որ աստվածային հայտնությամբ շնորհված օրենքներն ու պատվիրանները՝ հանձնառականներն ու հրաժարականները, այստեղ արդեն վերաճում են կենդանի համոզմունքի, գիտակցության փաստ դառնում: Դրանց հայտնութենականությունը հաստատվում է ոչ միայն հավատով ու խղճմտանքի վկայությամբ, այլ նաեւ արդեն բանականությամբ, որը զանազան կշռադատությունների միջոցով մոտեցնում է դրանք մարդկային ընկալմանը՝ կատարելագործելով գիտելիքն ու բարեպաշտությունը:

Հինկտակարանյան օրենքն իր լրումը պիտի գտներ Նոր Կտակարանում՝ Փրկչի Լեռան քարոզով եւ երանիներով: Վերջիններիս միջոցով Քրիստոս արթնացնում է բարոյական օրենքի նկատմամբ մեր անտարբեր ու սառը սրտերը, բացահայտում Տասնաբանյա պատվիրանների հոգեւոր խորքերը, ցույց տալիս օրենքի սրբությունն ու հավիտենական էությունը եւ այն իրագործելու փրկարար խորհուրդը: Հին Կտակարանի օրենքը խիստ արդարության օրենքն էր (հմմտ. Գաղ. Գ 19), իսկ Քրիստոսի օրենքն աստվածային սիրո օրենքն ու շնորհն է. «Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ սիրեք միմյանց. ինչպես ես ձեզ սիրեցի, դուք էլ միմյանց սիրեցեք» (Հովհ. ԺԳ 34): Պողոս առաքյալն ասում է. «Այսպես՝ օրենքը դաստիարակ եղավ՝ մեզ Քրիստոս Հիսուսին բերելու, որպեսզի հավատով արդարանանք» (Գաղ. Գ 24):

Աշխարհում չկա եւ չի եղել մի հասարակություն՝ առանց օրենքի ու կրոնի. այսպիսին է ազգագրագետների եզրակացությունը, ուստի եւ օրենքն ամեն անգամ պարզունակ մշակույթի գրավոր ու բանավոր ավանդության անքակտելի մասն է եւ մարդկային հասարակության ձեւավորման հիմնարար սկզբունքը: Օրենքը նույնիսկ սովորական իմաստով սահմանվում է իբրեւ բարձրագույն իշխանության կամ սովորույթի ու հասարակական կարծիքի ուժով կարգված կարգ ու կանոն, որի պահպանումը պարտադիր է, եւ որն ամենայն հասարակության ներդաշնակության առհավատչյան է: Սակայն հասարակությունից հասարակություն այն տարբերվում է ոչ միայն իր խստությամբ կամ մարդասիրությամբ, այլեւ գիտակցման խորությամբ եւ, որ նվազ կարեւոր չէ, դրա բախտորոշ դերի ու նշանակության ըմբռնմամբ: Այսպես՝ հեթանոսական օրենքը (թեեւ ուներ առանձին փայլատակումներ) դաժանաբարո ու այլասերված դիքերի եւ դիցաբանական մտածողության (որն ունակ չէր զանազանելու աստվածայինը մարդկայինից, հասարակը՝ նվիրականից ու սրբազանից) արգասիքն էր եւ ազատություն էր տալիս մարդու ստոր բնազդներին՝ առավելապես կազմելով բռնակալական կենտրոնածիգ պետական վարչաձեւի հիմքը:

Իսկ Մովսեսի օրենքը, իր բոլոր մասերով հանդերձ, խարսխված է հավատի վրա, այսինքն՝ օրենքն Աստծու ճշմարիտ գաղափարի արգասիքն է, եւ կրոնական այս համոզմունքից էլ բխում են բարոյական ու մարդասիրական սկզբունքները: Այլ կերպ ասած՝ սուրբ, արդար, ամենագութ եւ ամենակարող Աստծու հետ հաղորդակցությունը կամ Ուխտի հարաբերությունները Նրա պատկերով ու նմանությամբ ստեղծված, սակայն անկյալ մարդուց համապատասխան վարք ու բարք են պահանջում: Այսուհանդերձ՝ հոգեւոր օրենքը, ի տարբերություն մյուսների, զարմանահրաշ հատկություններով էլ է օժտված. նախ՝ «....օրենքի իմացությունը մտքի հարստությունն է» (Առակ. Թ 10), ապա եւ ի զորու է վերափոխելու, մաքրագործելու եւ սրբացնելու մարդկանց եսասեր սրտերը (Սաղմ. ԺԸ 8–12).

«Տիրոջ օրենքն անբիծ է եւ վերափոխում է հոգիները.

Տիրոջ վկայությունն ստույգ է եւ իմաստուն է դարձնում տհասներին:

Տիրոջ արդարությունն ուղիղ է եւ զվարճացնում է սրտերը.

Տիրոջ պատվիրանները լույս են եւ լույս են տալիս աչքերին:

Տիրոջ երկյուղը սուրբ է եւ սուրբ է մնում հավիտյան:

Տիրոջ դատաստանները ճշմարիտ են եւ ինքնին՝ արդար:

Ոսկուց ու շատ թանկագին քարերից ցանկալի են դրանք, նույնպես եւ քաղցր՝ մեղրից ու խորիսխից ավելի:

Եվ քանի որ Քո ծառան պահպանում է դրանք, պահպանելու վարձը մեծ կլինի»:

Բացի քարեղեն տախտակների վրա Աստծու ձեռամբ գրված տասը պատվիրաններից՝ Մովսեսը Սինա լեռան վրա բազմաթիվ այլ օրենքներ էլ ստացավ, որոնք եւ կազմում են Ուխտի գրքի երկրորդ մասը եւ աստվածապետական հասարակության յուրաքանչյուր անդամի առօրյա կենսագործունեությունը կարգավորող օրենսգրքի հիմքն են՝ սահմանադրությունը՝ հիմնական օրենքը:

Հին Կտակարանում առհասարակ հաշվվում է գրեթե 613 օրենք, որոնցից 365-ը հրաժարականներ են («մի՛» ժխտական մասնիկի գործածմամբ), իսկ 248-ը՝ հանձնառականներ (այսպես կամ այնպես վարվելու պատվեր): «Օրենք»՝ «թորա» (եբրայերենում ստուգաբանվում է՝ ուղղություն, ցուցում) բառը բազմաթիվ հոմանիշներ ունի՝ պատվիրան, խոսք, պատգամ, իրավունք, կանոն, հրաման, վկայություն, ճանապարհներով՝ շավիղներով գնալ, որոնք իմաստային դույզն-ինչ տարբերություններ էլ ունեն: Այսպես՝ «պատվիրան»-ը գործածվում է բացարձակ հեղինակություն ունեցող հրամանի իմաստով, «խոսք»-ը, որ հայերեն սրբազան բնագրերում հաճախ թարգմանվում է «պատգամ», մատնանշում է մարդու պարտականություններն առ Աստված (այստեղից եւ Տասնաբանյան), իսկ «կանոն»-ը՝ առ հասարակություն: Սակայն առավել հաճախ այս բառերի իմաստային երանգները չեն երեւում, օրինակ՝ «Սրանք են պատվիրանները, օրենքներն ու կանոնները» (Բ Օր. Զ 1. տես նաեւ Գ Թագ. Բ 3):

Սինայական օրենքներն իրենց բնույթով բաժանվում են խմբերի՝ կրոնական կամ աստվածային (I–IV պատվիրաններ), բարոյական (V–X պատվիրաններ), ծիսական կամ աստվածապաշտական (սահմանվում է աստվածապաշտության վայրը, որ են՝ շարժական խորանը, ապա եւ Տաճարը, անձինք՝ քահանաներն ու ղեւտացիները, ժամանակն ու արարողությունները) եւ քաղաքացիական: Վերջին խմբի օրենքներն իրենց հերթին բաժանվում են ենթախմբերի՝ Աստծու ժողովարան մտնելու, սեփականության, կենդանիների նկատմամբ կարեկցանքի, պատերազմի եւ խաղաղության, օրհնություններ եւ անեծքներ պայմանավորող օրենքներ (Բ Օր. գլուխ 27–28):

Այս շարքում առանձին խումբ են կազմում եւ Սուրբ Գրքում հատուկ հարգ ունեն աղքատներին վերաբերող օրենքները, քանզի Հնգամատյանի վարդապետության համաձայն՝ բովանդակ հասարակության բարոյական մակարդակի ցուցիչն իր իսկ տկար, անպաշտպան խավի (պանդուխտներ, որբեր, այրիներ, կույրեր, անդամալույծներ եւ այլն) նկատմամբ դրսեւորվող վերաբերմունքն է. «Իրավունք ու արդարություն արեք, կողոպտվածին փրկեցեք իրեն զրկողի ձեռքից, պանդուխտին, որբին ու այրուն մի՛ բռնադատեք եւ ամբարիշտ մի՛ լինեք, այդտեղ անմեղ արյուն մի՛ թափեք: Եթե այս բանը կատարեք,– ասում է Երեմիա մարգարեն ելք գրքի ԻԸ 21–26 համարի պատգամների խորհրդով,– ապա այդ տան դռներով ներս կմտնեն թագավորներ, որոնք կբազմեն Դավթի աթոռին եւ կնստեն կառքեր ու կհեծնեն երիվարներ, թե՛ իրենք եւ թե՛ իրենց ծառաներն ու իրենց ժողովուրդը: Իսկ եթե չկատարեք այս բաները, ապա Ինքս Ինձ երդվում եմ,– ասում է Տերը,– որ ավերակ պիտի դառնա այդ տունը» (Երեմ. ԻԲ 3–5):

Ըստ Աստվածաշնչի ուսուցման՝ աղքատությունը, ինչ պատճառներով էլ որ պայմանավորված լինի, հասարակական չարիք է, թեեւ անխուսափելի եւ որպես անանց պատգամ ու գործելու պատվեր է հնչում բոլոր ժամանակների եւ ժողովուրդների համար. «Թող ձեր մեջ կարիքավորներ չլինեն, եւ քո Տեր Աստվածը քեզ կօրհնի.... ➥ էջ 4, 8

Սուրբ Մարիամ Աստվածածնի վերափոխումը

«...բուսաւ յԱննայէ մորեանին Մարիամ,
Յոր վառեցաւ հուրն աստուածային,
Զոր ետես Մովսէս զօրինակ Կուսին ի Սինա Լցեալ լուսովն անմատոյց....»:

Եկեղեցական տոներն առանձնահատուկ առիթներ են մեզ համար՝ ներհայման, տոնի խորհուրդը հոգեպես ապրելու, պատգամը մաքրված սրտով ըմբռնելու, կյանքը վերստին արժեւորելու, Աստծու հետ հաղորդակցությունը վերականգնելու:

Սուրբ Կույսի վերափոխման տոնը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հինգ տաղավար տոներից է՝ Աստվածամորը նվիրված տոներից թերեւս ամենաժողովրդականն ու սիրվածը:

Գարեգին Ա հայրապետը (1995–1999 թթ.) իր քարոզում՝ խոսված Մայր տաճարում Ս. Աստվածածնի վերափոխման տոնին, ասում է. «Առաջին պատգամը, որ այսօր իրենից կը ճառագայթէ մեր բոլորի կեանքերի մէջ՝ մաքրակենցաղութեան, սրբութեան, հոգեկան առաքինութիւնների, բարոյական առողջ սկզբունքների ներգործութեամբը մեր կեանքն ապրելու կոչն է՝ արժանի լինելու համար Աստուածորդւոյն եւ մեր երկնաւոր Հօրը եւ Ս. Հոգւոյն ներգործութեանը» («Էջմիածին», 1995, Ը–Թ, էջ 7):

Վերափոխման տոնն Աստվածամորը նվիրված տոներից ամենահինն է:

Ավետարանում կարդում ենք, որ խաչյալ Հիսուս Քրիստոս Սուրբ Աստվածածնի խնամքը հանձնեց Հովհաննես առաքյալին. «Երբ Հիսուս տեսավ մորը եւ այն աշակերտին, որ մոտ էր կանգնած, որին նա սիրում էր, մորն ասաց. «Ո՛վ կին, ահա՛ քո որդին»: Ապա աշակերտին ասաց. «Ահա՛ քո մայրը»: Եվ այդ պահից սկսած՝ աշակերտը նրան իր մոտ առավ» (Հովհ. ԺԹ 26–27):

Այդ ժամանակ Սրբուհին քառասունութ տարեկան էր: Նա Քրիստոսի համբարձումից հետո ապրեց եւս տասներկու տարի: Աստվածամոր երկրային կյանքը, այսպիսով, տեւեց վաթսուն տարի («Ս. Գրիգոր Տաթեւացու քարոզը Աստվածածնի վերափոխման մասին», «Էջմիածին», 1994, Ը, էջ 7):

Սուրբ Կույսն այս աշխարհում բազում չարչարանքներ ու վիշտ կրեց, հալածվեց հրեաների կողմից: Վերջիններս թույլ չէին տալիս նրան անգամ այցելել գերեզման եւ տնօրինական վայրեր:

Փրկչի համբարձումից անցնում է տասներկու տարի, Մարիամի մոտ է գալիս Գաբրիել հրեշտակապետը՝ նա, ով Աստվածորդու ծննդյան ավետիսն էր բերել Սուրբ Կույսին, եւ հայտնում այս աշխարհից վերափոխման ավետիսը:

Ստանալով բարի լուրը՝ Աստվածամայրն իր մոտ է կանչում ազգականներին ու դրացիներին, սկսում պատմել Աստծու մեծափառ գործերի մասին:

Կեսգիշերին լույսի ճառագայթ է ծագում, անուշահոտություն բուրում. Տերը՝ անմարմին հրեշտակների զորքով շրջապատված, եկել էր Իր սուրբ ծնողի լուսապայծառ հոգին տանելու: Աստվածամայրը զվարթերես ավանդում է հոգին: Սուրբ Կույսի հոգին խառնվում է լուսեղեն զորքին, իսկ մահճում մնացած մարմինը չի այլակերպվում՝ դիակի նմանվելով, այլ շարունակում է բուրել ասես խունկ: Տերը հրեշտակների զորքով բարձրանում է երկինք:

Առաքյալները, մաքուր կտավով պատելով Սրբուհու մարմինը, հավատացյալների ուղեկցությամբ տանում են Գեթսեմանիի ձորը: Հրեաները հրահրում են ամբոխին առաքյալների թափորի դեմ, հարձակվում նրանց վրա՝ կամենալով հափշտակել Սուրբ Կույսի մարմինը, սակայն պատժվում են կուրությամբ: Քահանաներից մեկը՝ Սոփոնիան, նույնիսկ հանդգնում է ձեռքերը երկարել՝ կամենալով Աստվածընկալի մարմինը գցել. նրա ձեռքերն այդ պահին, արմունկներից կտրվելով, կախված են մնում դագաղից: Դարձի գալով բժշկվում են թե՛ կուրացած հրեաները, թե՛ Սոփոնիա քահանան:

Առաքյալները Տիրամոր մարմինը սաղմոսներով եւ օրհնությամբ դնում են գերեզմանն ու այնտեղ մնալով երեք օր՝ պահպանում. այդ ողջ ընթացքում լսվում էր հրեշտակների փառաբանության ձայնը:

Բարդուղիմեոս առաքյալը ներկա չէր եղել Տիրամոր ննջմանը: Վերադառնալուց հետո նրա խնդրանքով առաքյալները բացում են Սուրբ Կույսի գերեզմանը եւ տեսնում, որ այն դատարկ է. Տիրամայրը վերափոխվել էր երկինք: Թովմաս առաքյալը երգում է. «Փառավորյալ եւ օրհնյալ միշտ Սուրբ Կույս Աստվածածին Մարիամ՝ մայր Քրիստոսի, մատուցի՛ր մեր աղաչանքները քո Որդուն եւ մեր Աստծուն» («Ս. Գրիգոր Տաթեւացու քարոզը Սուրբ Աստվածածնի վերափոխման մասին», էջ 13):



Ս. Աստվածամոր հրաշագործ պատկերի պատմությունը

Հովհաննես ավետարանիչը վերցրել էր կիպարիսի մի տախտակ ու կերպաձեւել Տիրամոր պատկերը: Առաքյալները խնդրում են Աստվածամորն օրհնել այն, որպեսզի նրանք, ովքեր կապավինեն Սրբուհու բարեխոսությանը, առողջանան, բժշկվեն ցավերից. «Աստուծո Բանի անարատ առագաստ, աղաչում ենք քեզ, վերցրու Հովհաննեսի նկարած այս փայտեղեն պատկերը քո սուրբ ձեռքերի մեջ, օրհնի՛ր այն եւ տո՛ւր սա որպես աշխարհի կյանքի նշան. եւ աղաչի՛ր քո Որդուն եւ մեր Աստծուն պատկերի միջոցով վերացնել բորոտությունը մարդկանց որդիներից, որոնք քո բարեխոսությանն են ապավինում»:

Ամենաօրհնյալ Կույսը պատասխանում է նրանց. «Եվ ինչո՞ւ եք ինձ՝ Տիրոջ աղախնին ստիպում իմ անունով անել այն, ինչ արժան չէ ինձ: Դուք եք եղել մեր Արարիչ Քրիստոսի աշակերտները, ձեզ է շնորհել դեւերին հալածելու, ախտերն ու հիվանդությունները բժշկելու, աներեւույթ գազանին ընդոտնելու եւ աշխարհից կռապաշտությունը վերացնելու իշխանությունը: Ինչ որ դուք կամենում եք, խնդրե՛ք ձեր Տիրոջն ու Աստծուն եւ կունենաք»:

Պողոս առաքյալը խնդրում է Աստվածամորը, որ ինչպես Միածինն Իր մահվան փայտը որպես անմահության գործիք, դեւերի հալածիչ տվեց աշխարհին, նա էլ իր պատկերը թողնի: Ընդառաջելով աշակերտների թախանձանքին՝ Աստվածամայրը վերցնում է պատկերը, խնդրում Աստծուն նրանով բժշկել հատկապես բորոտներին: Սուրբ Կույսը պատկերը հպում է դեմքին, թրջում արտասուքով: Այդ նույն պահին լուսեղեն կամար է իջնում Սրբուհու վրա: Պետրոս եւ Պողոս առաքյալները Աստվածամոր ձեռքից վերցնում են պատկերը, եւ բոլորը երկրպագում են:

Ի մխիթարություն սգացող Բարդուղիմեոս առաքյալի, որը Տիրամոր ննջման ժամանակ առաքյալների հետ ներկա չէր, նրան է տրվում Աստվածամոր պատկերը:

Արծրունյաց Սահակ իշխանին ուղղված պատասխան թղթում պատմահայր Մովսես Խորենացին գրում է, որ Բարդուղիմեոս առաքյալը Սուրբ Հոգու հրահանգով Հայք է ուղեւորվում: Հասնելով Անձավացյաց աշխարհի «Դարբնոց քար» կոչված վայրը՝ հալածում է չարի գործակից դարբիններին, փշրում կուռքերը, խաչ կանգնեցնում:

Առաքյալը կառուցում է փոքր եկեղեցի՝ այն անվանելով Սուրբ Աստվածածին եւ այնտեղ է դնում Տիրուհու պատկերը (*Ս. Մովսես Խորենացի*, Աստվածաբանական երկեր, Ս. Էջմիածին, 2007, էջ 11–26):

Տոնակատարման օրը

«Յաղագս տօնի վերափոխման՝ թէ երբ սահմանեցաւ յԵկեղեցւոջ, չունիմք յիշատակս հաւաստիս յառաջին դարուց» («Բացատրութիւն շարականաց», Վենէտիկ, 1814, էջ 485). նույն տեղում հիշատակվում է նաեւ Զաքարիա Ա Զագեցի կաթողիկոսի (855–876 թթ.)՝ Աստվածամոր ննջման ճառը, ըստ որի՝ Վերափոխման տոնը սահմանել են առաքյալները:

Տոմարագետ Ռ. Վարդանյանը գրում է, որ 420-ական թվականներին Սահակ Ա Պարթեւ կաթողիկոսի (387–439 թթ.) թարգմանած եւ խմբագրած «Կանոնք ընթերցուածոց»-ում առկա է Մարիամ Աստվածածնի միակ տոնի մեկօրյա կանոնը՝ սահմանված օգոստոսի 15-ին (տես *Ռ. Վարդանյան*, Հայոց տոնացույցը (4–18-րդ դդ.), Երեւան, 1999, էջ 536):

Ըստ նրա՝ Վերափոխման տոնն

սկզբում նշվել է անշարժ ամսաթվով՝ օգոստոսի 15-ին, եւ չի փոփոխվել մինչեւ Ժ դարավերջ – ԺԱ դարասկիզբ: Ժ դարավերջին կամ ԺԱ դարի ընթացքում անշարժ տոնից աստիճանաբար վերածվել է շարժականի եւ տոնվել օգոստոսի 15 ±3 օր՝ կիրակի, այսինքն՝ օգոստոսի 12–18-ի կիրակիներից մեկում:

Ըստ Նորայր արք. Պողարյանի՝ Սուրբ Աստվածածնի վերափոխումն սկզբնապես տոնվում էր երեք օր, սակայն Ներսես Դ Շնորհալի կաթողիկոսի (1166–1173 թթ.) կարգադրությամբ դարձել է «երիցս կրկնելի» եւ տոնվել է ինն օր (*Նորայր արք. Պողարեան*, Ծիսագիտութիւն, Նիւ Եորք, 1990, էջ 72):

Ռ. Վարդանյանը նշում է, որ Տիրամոր վերափոխման տոնական օրերի ընդլայնում (3-օրյա տոնից 9-օրյայի վերածումը) տոնացույցների խմբագրություններն արձանագրել են սկսած ԺԵ դարի 40-ական թվականներից (*Ռ. Վարդանյան*, Հայոց տոնացույցը (4–18-րդ դդ.), էջ 540):

Ռ. Վարդանյանը, ելնելով բնագրերից, եզրակացնում է, որ սկզբնական շրջանում Վերափոխման տոնի 9-օրյա շարքը հիմնված է եղել կամավորության սկզբունքի վրա. 3 կամ 9 օր, սակայն հետագայում՝ ԺԶ դարից սկսած, 9-օրյան դարձել է պարտադիր, որին եւ հետեւել է Սիմեոն Ա Երեւանցի կաթողիկոսը (1763–1780 թթ.): Այժմ Սուրբ Աստվածածնի վերափոխման տոնական շարքն 9-օրյա է:

Ս. Գրիգոր Տաթեւացին այս առնչությամբ հինգ պատճառ է նշում, թե ինչու ենք Վերափոխումը տոնում հենց կիրակի օրը. պատճառներից մեկն այն է, որ այն տերունական տոն է:

Ս. Գրիգոր Տաթեւացին բացատրում է նաեւ Վերափոխման տոնը մեկ, երեք եւ ինն օր տոնախմբելը. «....նախ ասենք, որ այդ բոլորն էլ իմաստ ունեն իրենց մեջ. նրանք, ովքեր օգոստոսի 15-ին մեկ օրով են տոնում, նկատի ունեն Ամենասրբուհու ննջումը, նրանք, ովքեր երեք օր են տոնում՝ հարությունը, քանզի ամենասուրբ Կույսի հարությունն առաքյալներին հայտնի դարձավ երեք օր հետո, երբ դադարեցին հրեշտակների ձայները»: Իսկ ինն օր տոնախմբելը Ս. Գրիգոր Տաթեւացին մեկնաբանում է հետեւյալ կերպ. ինչպես Միածին Որդին, երկինք համբարձվելուց հետո ամեն օր հրեշտակների յուրաքանչյուր դասում հանգստանալով (նրանք ուրախությամբ երգում էին մինչեւ տասներորդ օրը), բարձրացավ նստեց Հոր աջ կողմում եւ առաքյալներին ուղարկեց Մխիթարչին՝ Սուրբ Հոգուն, այնպես եւ Աստվածածնի վերափոխման ժամանակ հրեշտակների դասերը, կարգով մոտենալով, տոնախմբում էին. ըստ տարբեր դասերի զանազան օրհնություններով բարեբանություն եւ փառաբանություն էին մատուցում, պատվում՝ որպես Մայր եւ Ծնող Աստծու Բանի («Ս. Գրիգոր Տաթեւացու քարոզը Սուրբ Աստվածածնի վերափոխման մասին», էջ 13–15):

Շարունակելի

Աստղիկ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Մա՛յր Սուրբ, բարեխօսեա՛

Բոլոր կանանց մեջ ամենաօրհնյալ Սուրբ Կույս Մարիամ Աստվածածինը՝ որպես ուխտի զավակ, լույս աշխարհ է եկել Հովակիմին եւ Աննային տրված ավետիսի համաձայն: Մարիամը Հակոբի որդիների՝ Ղեւիի եւ Հուդայի զարմից էր, ինչը նշանակում է՝ քահանայական եւ թագավորական ծագում ուներ: Ամենասրբուհի Մարիամի ծնողները, հիացումով ականատես լինելով իրենց աղոթքների իրականացմանը, ի կատարումն ամենակարող Աստծու հետ իրենց դաշնադրած ուխտի՝ երեք տարեկան Մարիամին տանում են Տաճար՝ Տիրոջն ընծայելու: Տաճարում Զաքարիա քահանան իր գիրկն է առնում մանկանը եւ նրան կոչում «Մարիամ», որ նշանակում է «լուսավորյալ»՝ լավագույնս մատնացույց անելով երանելի Կույսի առաքելությունն ու դերը համայն աշխարհի մարդկությանը քրիստոնեական ճշմարիտ լույսով պայծառացնելու աստվածային ծրագրում:

Ամեն տարի՝ Մարիամի ծննդյան օրը, Հովակիմն ու Աննան նրան տանում էին Տաճար, համապատասխան ծիսակարգ կատարում եւ վերադառնում տուն: Երբ բոլորում է Մարիամի յոթ տարին, ծնողները նրան դարձյալ Տաճար են տանում, բայց այլեւս իրենց հետ տուն չեն վերադարձնում, այլ ընծայում են Տաճարին: Համաձայն ավանդության՝ մանուկ Մարիամը Տաճարում հոգեւոր սնունդ էր ստանում, աղոթում. նրան սպասավորում էին հրեշտակները, որոնք երկնքից իջնելով՝ իրենց հետ մանանա էին բերում եւ կերակրում սրբուհուն:

Ավանդությունը պատմում է նաեւ, որ Մարիամը Տաճարի վարագույրի համար մետաքսաթել էր մանում: Երբ Մարիամը տասնչորս տարեկան է դառնում, նրան հանձնում են պարկեշտ եւ աստվածավախ հյուսն Հովսեփի խնամքին, քանի որ սրբուհու ծնողներն արդեն մահացել էին: Հովսեփը, բարեպաշտ եւ արդար մարդ լինելով, Մարիամին տանում է իր տուն՝ Գալիլիայի Նազարեթ քաղաք, որտեղ եւս, ինչպես Տաճարում, հրեշտակները սպասավորում էին Սուրբ Կույսին:

Որոշ ժամանակ անց Մարիամին է հայտնվում Գաբրիել հրեշտակապետը՝ ավետելով. «Ուրախացի՛ր, ո՛վ շնորհընկալ, Տերը քեզ հետ է.... Սուրբ Հոգին կգա քեզ վրա, եւ Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ, որովհետեւ Նա, որ քեզնից է ծնվելու, սուրբ է եւ Աստծու Որդի կկոչվի» (հմմտ. Ղուկ. Ա 28–35):

Սրբուհի Մարիամը, լսելով հրեշտակին, հավատում է նրան եւ պատասխանում. «Ահավասի՛կ ես մնում եմ Տիրոջ աղախինը, թող քո խոսքի համաձայն լինի ինձ» (Ղուկ. Ա 38): Այդպես Սուրբ Կույսն ստանձնում է աշխարհի Փրկչին լույս աշխարհ բերելու քաղցր եւ միաժամանակ դժվարին պատրաստակամությունը՝ արժանանալով Աստծու օրհնությանն ու մարդկանց երանիներին:

Երբ Սրբուհին հյուր է գնում իր մորաքրոջ դստերը՝ Եղիսաբեթին, վերջինս օրհնությամբ բարբառում է. «Օրհնյա՛լ ես դու կանանց մեջ, եւ օրհնյա՛լ է քո որովայնի պտուղը: Որտեղի՞ց ինձ այս ուրախությունը, որ իմ Տիրոջ մայրն ինձ մոտ գա» (Ղուկ. Ա 42–43):

Սուրբ Կույսը նաեւ մեզ՝ իր բարեխոսությունը հայցող հոգեզավակներիս է այցելում ու բաշխում իր մայրական ջերմագին գուրգուրանքն ու սերը, ուստի եւ մենք, բարբառակից լինելով Գաբրիել հրեշտակապետին, Սրբուհի Եղիսաբեթին եւ մյուս բոլոր սրբերին, օրհնաբանենք Մարիամ Աստվածածնի լուսավորյալ անունը եւ բյո՛ւր երանիներ ընծայենք նրան:

Աստվածածնին ձոնված են բազմաթիվ գեղեցիկ օրհներգություններ, որոնք իրապես արտացոլում են այն ներքին հոգեւոր ապրումներն ու համակրանքը, որ մարդկությունը եւ քրիստոնեական աշխարհը տածում են Սուրբ Կույսի հանդեպ: Այդ օրհներգությունների շարքում առանձնահատուկ տեղ ունի երանելի Պետրոս եպիսկոպոս Սյունեցու «Գովեստ ի Սուրբ Աստուածածինն» երկը, որը ցայսօր արդիական է իր քաղցրալուր հնչերանգով ու Աստվածամոր հանդեպ ակնածանքի խորին ապրումով:

Ո՞վ էր, սակայն, այս երանելի եկեղեցական գործիչը: Հավանաբար Ե դարավերջին ծնված Պետրոս Սյունեցին, որ պատանեկան տարիներին աշակերտելով Մովսես Քերթողահորը՝ խոր եւ համակողմանի գիտելիքներ է ստացել ու հմտացել մեկնողական, քերթողական արվեստի մեջ: Ուստի բնավ պատահական չէ, որ Պետրոս Սյունեցին հայտնի է նաեւ «Քերթող» պատվանունով: Նա եղել է նաեւ Սյունյաց թեմի հոգեւոր առաջնորդը:

Որպես հայ եկեղեցական մատենագրության հիմնասյուներից մեկը՝ ծավալել է գրական լայն գործունեություն, հեղինակել ճառեր, ներբողներ եւ դավանաբանական-մեկնողական աշխատություններ: Բազմավաստակ Ստեփանոս Օրբելյանը մեծարել է Պետրոս եպիսկոպոսին եւ իր «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության մեջ գրել. «Բազմերջանիկ եւ անհամեմատն ի մարդկանէ Պետրոս՝ աշակերտ Քերթողահաւրն, քաջ հռետորն եւ անյաղթ փիլիսոփայն, լի իմաստութեամբ եւ կատարեալ առաքինութեամբ, նախաթոռ վարդապետաց Հայոց, Քերթող եւ թարգմանիչ, որ արար բազում թարգմանութիւնս, եւ խաւսեաց ճառս իմաստայեղց ի ծնունդն Քրիստոսի եւ ընդդէմ քաղկեդոնականացն եւ այլս յոլովս, եւ մեկնեաց զխրթին եւ զդժուարիմաց բանս Հին եւ Նոր Կտակարանաց.... Սա հարցեալ ի Վաչագանայ՝ Աղուանից թագաւորէ, բանս բազումս, ուժեղս եւ զաւրաւորս, եւ ընկալեալ զպատասխանին յոյժ ի ճաի եւ ուղիղ լուծմամբ»:

Պետրոս Սյունեցու «Գովեստ...»-ն աչքի է ընկնում աստվածաբանական խոր վերլուծությամբ եւ գեղարվեստական արժեքով. այն հնում ընթերցվում էր Սուրբ Ծննդյան տոներին: Քսանչորս տնից բաղկացած այս երկը հայ եկեղեցական մատենագրության մեջ Աստվածամորը գովերգող առաջին ներբողն է, որտեղ Սուրբ Մարիամը գովերգվում է գեղեցկագույն մակդիրներով եւ արտահայտություններով. «Ուրա՛խ լեր, Մարիամ, Դրախտ աստուածատունկ.... Ուրա՛խ լեր, Մարիամ, Այգի վայելուչ, Մորենի անկի-

Աստվածաշունչը՝ աղքատների մասին

↩ էջ 2

Քանի որ կարիքավորներն անպակաս են լինելու երկրի վրա, դրա համար էլ այս բանը պատվիրելով՝ ասում եմ. «Քո աղքատ եղբոր եւ քո երկրում տառապյալ մարդկանց նկատմամբ առատաձեռն եղիր» (Բ Օր. ԺԵ 4, 11): Այս աստվածային պատվիրանն իրականացման բազմաթիվ եղանակներ ունի. նախ՝ որպես տասանորդ (բացի Աստծուն նախատեսվածից) ամեն երրորդ տարում ղեւտացու, եկվորի, որբի ու այրու համար. «Նրանք թող ուտեն ու հագենան քո քաղաքներում: Այն ժամանակ քո Տեր Աստծու առջեւ կասես. «Ինչ որ սուրբ էր, իմ տնից դուրս տարա, ըստ Տեր Աստծու ինձ տրված հրամանների հանձնեցի ղեւտացուն, եկվորին, որբին ու այրուն: Տե՛ր, քո պատվիրաններն անտես չարեցի, չմոռացա» (Բ Օր. ԻԶ 12–13): Փաստորեն՝ սա բարեգործության սկիզբն էր աշխարհում, որը դարեր շարունակ եւ այսօր էլ հատուկ է հրեաներին, ինչը որդեգրվեց ու մեծ տարածում գտավ նաեւ քրիստոնեական աշխարհում:

Կողոպուտ է համարվում եւ խստագույնս արգելվում աղքատ մարդու կամ պանդուխտի վարձը չտալը. «Մի՛ զլացիր վարձ տալ քո աղքատ ու կարիքավոր եղբայրներին կամ քո քաղաքներում գտնվող եկվորներին. նույն օրը տո՛ւր նրա վարձը, քանի դեռ արեւը մայր չի մտել, որովհետեւ նա տնանկ է, եւ դա է նրա հույսը: Նա քո մասին թող չբողոքի Տիրոջը, եւ քեզ վրա դա որպես մեղք թող չբարդվի» (Բ Օր. ԻԴ 14–15):

Տնանկին եւ պանդուխտին վերաբերող մեկ այլ օրենք՝ «Դուք՝ ձեր դաշտերի հնձվորներդ, հունձ անելիս ձեր դաշտերը մինչեւ վերջ մի՛ հնձեք եւ հնձի ժամանակ ընկած հասկերը մի՛ հավաքեք: Ձեր այգում ճռաքաղ մի՛ արեք (այգեկութից հետո մնացած ողկույզի, պտղի հավաքում.– Գ. Դ.) եւ ոչ էլ այգեկութից հետո ձեր այգում մնացած

խաղողի ողկույզները հավաքեք: Դրանք թող մնան տնանկին ու պանդուխտին: Ես եմ ձեր Տեր Աստվածը» (Ղեւտ. ԺԹ 9–10, տես նաեւ Ղեւտ. ԻԳ 22):

«Երբ քո արտը հնձելուց հետո խուրձ մոռանաս քո արտում, մի՛ վերադարձիր այն վերցնելու համար. դա թող պատկանի աղքատին, եկվորին, այրուն ու որբին, որպեսզի քո Տեր Աստվածը քեզ օրհնի բոլոր այն գործերում, որոնց ձեռնարկում ես» (Բ Օր. ԻԴ 19): Ընդ որում՝ օրենքը յուրաքանչյուր մարդու՝ այդ թվում նաեւ աղքատին արտոնում է. «Եթե մտնես քո մերձավորի արտը, ապա հասկը կարող ես քաղել ձեռքով, բայց քո մերձավորի արտում մանգաղ չգործածես: Եթե մտնես քո մերձավորի այգին, ապա խաղող կարող ես ուտել մինչեւ հագենալդ, բայց ամանի մեջ լցնելով՝ չտանես (Բ Օր. ԻԳ 24–25): Սուրբ Եփրեմ Ասորու մեկնությամբ՝ «Եթե սոված ես, թող որովայնդ հագենա, իսկ ամանի մեջ լցնելն արդեն ագահությունդ է ցույց տալիս»:

Ինչպես վաղ շրջանում հեթանոս աշխարհում, այնպես եւ այսօր ագահասիրտ ու չար մարդիկ փորձում են այլեւայլ ճանապարհներով յուրացնել խեղճ, ընչազուրկ խավի ունեցվածքը, ծառայեցնել, շահագործել նրանց՝ օգտվելով այն հանգամանքից, որ պաշտպան չունեն: Եվ հենց նրանց է ուղղված սպառնալիքն Աստծու, որ սաղմոսերգուի բնորոշմամբ՝ «Հայրն է որբերի ու դատավորն այրիների» (Ծէ 6). «Պանդուխտին մի՛ չարչարեք, մի՛ նեղեք նրան, որովհետեւ դուք եւս պանդուխտ էիք եգիպտացիների երկրում:

Ոչ մի այրի կնոջ կամ որբի մի՛ տանջեք: Եթե տանջեք նրանց, եւ նրանք բողոք բարձրացնելով դիմեն ինձ, ես կլսեմ նրանց ձայնը, սաստիկ կբարկանամ, սրակոտոր կանեմ ձեզ, ձեր կանայք կայրիանան, իսկ ձեր զավակները որբ կդառնան:

Եթե արծաթ ես փոխ տալիս աղքատ եղբորդ, նեղը մի՛ գցիր նրան եւ տոկոսներ մի՛ պահանջիր նրանից: Եթե գրավ վերցնես մեկի բաճկոնը, մինչեւ արեւի մայր մտնելը վերադարձրու՛ այն, որովհետեւ դա նրա եւ՛ վերարկուն է, եւ՛ նրա մերկությունը ծածկող հանդերձը, որով եւ նա քնում է» (Ելք ԻԲ 21–27):

Իսրայելում ամեն յոթերորդ տարին, շաբաթ օրվա օրինակով, ազդարարվում էր հանգստյան տարի. հողը եւս պետք է հանգստանար, այգին՝ չէտվեր, արտը՝ չմշակվեր: Ինքնաբուս բերքը եւս նախատեսված էր բոլորի՝ այդ թվում նաեւ աղքատների համար: Այդ յոթերորդ տարին նաեւ թողության տարի էր. պարտատիրոջը պարտավորեցնում էր պարտապանի պարտքը ներել. «Զգո՛ւյշ եղիր, չլինի թե մտքումդ ծածուկ չար բան լինի, եւ ասես, թե՝ «Մոտ է յոթերորդ տարին՝ թողության տարին», եւ թշնամաբար նայես կարիքի մեջ գտնվող քո եղբոր վրա եւ նրան պարտք չտաս: Եթե նա քո դեմ բողոքի Տիրոջը, ապա դու մեծ մեղքի տակ կընկնես: Տո՛ւր նրան, պա՛րտք տուր նրան այնքան, որքան անհրաժեշտ է: Պարտք տալուց հետո մի՛ տրտմիր, որովհետեւ դրա համար քո Տեր Աստվածը քեզ կօրհնի քո բոլոր գործերում՝ ինչի էլ որ ձեռք տաս» (Բ Օր. ԺԵ 9–10):

Աղքատներին վերաբերող պատվիրաններն առավել ամբողջացան եւ լուսաբանվեցին Նոր Կտակարանում՝ այսրաշխարհում ժամանակավոր եւ անդրաշխարհում հավիտենական բարիքների խոստմամբ. «Երանի՛ ողորմածներին, որովհետեւ նրանք ողորմություն պիտի գտնեն» (Մատթ. Ե 7, տես նաեւ Զ 1–4):

Այսօր սույն պատվիրանները, առավել քան երբեւէ, յուրաքանչյուր անհատի, հաստատության, պետության գործունեության հիմքը պետք է կազմեն, քանզի մենք դատվելու ենք մեր գործերի՝ մասնավորապես հասարակության ամենաանպաշտպան խավի նկատմամբ ունեցած դիրքորոշման ու վերաբերմունքի համեմատ. «Պիտի պահպանեք Իմ բոլոր հրամաններն ու Իմ բոլոր պատգամները. պիտի կատարեք դրանք: Դրանք կատարող մարդը միայն պիտի փրկվի դրանցով» (Ղեւտ. ԺԸ 5): Սուրբ Ներսես Մեծը (329–373 թթ.)՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի զարմն ու Հայոց կաթողիկոսը, որն իրավամբ իր բարոյական ու կրոնական բարեփոխումների համար կոչվել է «Լուսաւորիչ սրտից», աստվածաշնչյան աղքատասիրության օրինակներ է ավանդել մեզ՝ ամենուր որբանոցներ, հիվանդանոցներ, աղքատանոցներ, անկելանոցներ (այստեղ խնամվում էին ծեր, անուժ, աշխատանքի անընդունակ մարդիկ) հիմնելով: ➥ էջ 8

Վասն մեր՝ մեղաւորաց

զելի, Լեառն սուրբ.... Գաւազան ծաղկեալ, Սափոր ոսկի, Տուփ անուշահոտ խնկոց, Տապանակ կենդանագիր կտակին, Ջրհոր կենդանի ջրոյն.... Երկիր ծարաւուտ, Առաւօտ խաղաղութեան....»: Պետրոս Սյունեցու այս ստեղծագործությունից որոշ հատվածներ ներմուծվել են «Շարակնոց»՝ որպես «Մեծասցուսցէ» շարականներ:

Պետրոս եպիսկոպոս Սյունեցի

Գովեստ Սուրբ Աստվածածնի եւ միշտ Կույս Մարիամի

Քրիստոսասեր հավատացյալներ, նորասքանչ ուրախությամբ տոնեք այս օրը [Սուրբ Ծնունդի] եւ մեծահրաշ ցնծությամբ բերկրացեք, որովհետեւ ահա երկինքը երկրին ձայն է տալիս ու Բեթղեհեմում փառքի ծագումն է ավետում:

Այսօր մեզ համար ցանկալի է Դավթի ջրհորը, որում Աստծու գետը (Քրիստոս), հորդահոս իջմամբ բխելով, արբեցնում է տիեզերքը: Արդարեւ, [Դավթի] օրինակը նախապես մատնանշեց գալիք ճշմարտությունը, քանզի Տիրամայրը կենդանի ջրի (Քրիստոսի) ինքնաբուխ ջրհորը եղավ, որից չհամարձակվեց խմել նրան պահողը (Հովսեփը), որովհետեւ անաղտ սրբությամբ կնքվեց կուսական մարմինը, որից եւ ծագեց արդարության Արեգակն ու Իր ճառագայթավետ լույսով լուսավորեց աշխարհը:

Արդ, ի՞նչ ասեմ կամ ի՞նչ խոսեմ, քանի որ միտքը եւ լեզուն չեն կարող արժանի պատիվ ընծայել կուսական այս տոնին, որովհետեւ հնարավոր չէ Աստծու մարդասիրությունը խոսքով չափել եւ ոչ էլ հաշվել թիվը բազմամեծար հարգանքի, որին արժանի է Մարիամը: Ո՞վ, ուրիշ ո՞վ լսեց այսպիսի սքանչելիք, որ Տերը եւ Ստեղծիչը հանձն առավ որպես մանուկ ծնվել աղախնից՝ հողեղեն ստեղծվածից: Այո՛: Կամենալով նախահոր եւ առաջին կույսի (Ադամի ու Եվայի) անկումը կանգնեցնել՝ [Աստվածորդին] իսկապես ծրարվեց [Մարիամի] որովայնում եւ այսօր ճշմարտապես ծնվեց որպես մանուկ: Ուստի ամեն խոսքից առավել պատվենք այս օրը. երկիրը երկնքից բարձր ճանաչենք: Արեւելքից ավելի հրաշափառ տեսնենք Սուրբ Կույսին եւ հրեշտակներից առավել հովիվներին մեծարենք ու քերովբեներից պատվական ճանաչենք մսուրը: Երուսաղեմը եւս առավել պայծառացավ, քան հրեղեն կառքը:

Այս արտահայտությունները ճարտասանական խոսքեր չեն, որ շարադրել ենք մտածումի ճիգով, քանի որ աստվածագիր մատյանները նույն բանը նախապես քարոզեցին: Քանզի ինքնագո Հայրը, որ Դավթի բերանով խոսերգեց՝ «Դու ես իմ որդին, եւ ես այսօր ծնեցի քեզ» (Սաղմ. Բ 7), եւ հրեշտակներին ու մարդուն ստեղծեց՝ նրանց բանավոր բնություն պարգեւելով, այսօր կարծես վերստին իրենից ծնում է [Բանին]:

Արդ, ասա՛, թե որ խոսքը կարող է հյուսել գովքն այս օրվա, երբ օրերի ու խոսքի Ստեղծիչը հանձն առավ վերստին ծնվել: Մի՞թե սնափառությամբ պարծեցա, երբ ասացի՝ երկիրը երկնքից բարձր ճանաչենք: Չէ՞ որ երկինքը սպասավոր հոգիների (հրեշտակների) բնակարանն է, մինչ երկիրը ամենքի Աստծու սեփական քաղաքը եղավ, ինչպես որ մարգարեն էր հայտնապես շեշտում, թե՝ «Այս է մեր Աստված, որի հետ չի կարելի բաղդատել որեւէ մեկին.... ապա երկրի վրա երեւաց ու շրջեց մարդկանց հետ» (Բարուք Գ 36, 38):

Կամ «Կույս Մարիամին արեւելքից առավել մեծ փառքով տեսանք» ասելով՝ մի՞թե մեծամտությամբ պետք եղածից ավելի չափազանցրի: Քա՛վ լիցի, քանի որ թեպետ արեւելքը պատվական է տվնջյան հուրը (լույսը) ծագեցնելու համար, բայց ո՛չ աղախին Տիրամոր չափ, որի մեջ բնակվեց ամենքի Աստվածն ու նրանի՛ց արեգակնաբար ծագեց աշխարհի վրա:

«Քերովբեներից առավել» կոչելով մսուրը՝ մի՞թե տհասությամբ տարբեր բաների մասին բարբառեցի: Չէ՞ որ ահա Նա, Ումից վեցթեւյան [սերովբեները] հեռվից իսկ հիացումով սարսռում են, այսօր բազմում է մսուրի մեջ այնպես, ինչպես իր Հոր ծոցում: Ուստի եւ մարգարեական՝ շնորհների շուրթերը, քերովբեների ճախրը դիտելով, ճշմարտապես երկիրը երկնքի հետ համեմատեցին ու մանավանդ մարդկանց էլ հրեշտակներից գերազանց ներկայացրին: Քանի որ Նա, Ում տեսքից երկինքը մոմի նման հալվում է, այսօր ամփոփվում է քարայրի մեջ: Սրա համար է առակավոր խոսքը զարմացական հիացումով հարցնում, թե՝ «....ո՞րն է լույսի բնակարանը» (Հոբ ԼԸ 19), քանի որ հայրենի ծոցից որպես հուր փայլակնացավ ու խոսուն հողի (Մարիամի) մեջ անվնաս ծրարվեց, ըստ նույն կանխասացության, թե՝ «....երկիրը, որից հաց է ելնում, իր տակ կրակի նման բաներ ունի» (Հոբ ԻԸ 5), ինչը եւ մյուս մարգարեն հայտնապես մեկնում է, թե՝ «Հաց ես տալիս երկրից» (Սաղմ. ՃԳ 15), այսինքն՝ Նա Իր մարմինը Սուրբ Կույս Մարիամից առավ:

Ինչպիսի՜ անպատում երանիներ տրվեցին Սուրբ Կույսի որովայնին, որը մարգարեության հոգին Դավթի բերանով «սուրբ լեռ» կոչեց. «Նրա հիմքերը սուրբ լեռան վրա են» (Սաղմ. ՁՁ 2): Արդարեւ այս լեռան մեջ տնօրինյալ անբաժանելի միավորությամբ հիմնավորվեցին երկու աշխարհներ՝ աստվածություն ու մարդկություն: Հետեւաբար թող որեւէ մեկը չհամարձակվի Սուրբ Կույսից ծնվածին սոսկ մարդ կոչել, որովհետեւ Բարձրյալն Ինքը նետեց հիմքերը նրա [Կույսի] մեջ, ինչպես որ հրեշտակն էլ հայտարարեց, որ «նրանից ծնվածը Սուրբ Հոգուց է» (Մատթ. Ա 20): [Սաղմոսերգուն] էլ ասում է. «Տերը Հակոբի բոլոր բնակարանների միջից Սիոնի դռներն ամենաշատն է սիրում» (Սաղմ. ՁՁ 2): Անսկիզբ Բանն Աստված Իր համար Սիոնի դուռ դարձրեց Սուրբ Կույսի մարմինը, հրեշտակի տված ողջույնի հետ Մարիամի լսելիքից ներս վազեց, ու ինանմսյա ժամանակով մարմնի մեջ Ինքն Իրեն թանձրացնելով՝ անմահացնող Տերն առանց զզվելու դուրս ելավ այնտեղից, որտեղից բոլոր մահկանացուներն են ծնվում: Ինչպիսի՜ մեծ խորհուրդ. մտավ ու ելավ եւ կուսության դռները փակ պահեց:

Շարունակելի

Հոդվածը եւ գրաբարից փոխադրությունը՝
Գեւորգ սրկ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ
Աննա ՀՈՎՍԵՓՅԱՆԻ

Ջմրուխտ վազերի սգերգը

Սկիզբը՝ թիվ 14

Խաղողօրհնության տոնի հաջորդ առավոտ Գեղամը բահն ուսեց, ու դեռ դարպասին չհասած՝ փոքրիկները շապկանց պատշգամբ ելան, զիլ ու կայտառ ձայնեցին.

– Հայրի՛կ, մեզ համար էլի խաղող կբերե՞ս:

Գեղամը ժպտաց նրանց, խոստացավ ու խոր հոգոց քաշելով՝ գնաց... Գնաց... ճակատագրին ընդառաջ...

Անքուն, տառապանքով անցկացրած գիշերը նա վճռել էր՝ եթե այս անգամ էլ Համոն մերժի, ինքն է բանալու ջրփակը: Թող որ տուգանեն մեկ, թեկուզեւ երկու տոննա խաղողի արժեքի չափով, հո կփրկի՞ վազերի կյանքը, սպասած բերքի մեծ մասը եւ, մանավանդ, պատիվը, պատի՜վը... Չէ՞ որ ինքը երբեք ստրկահոգի չի եղել...

Նրան հանդիպողները, ասես խոսքները մեկ արած, «Բարի լույս»-ից հետո պիտի այգու ջրել-չջրելուց հարցնեին: Ամեն հարցումը մի-մի պտղունց աղ էր Գեղամի սրտի բաց վերքին... Չգիտեր՝ մարդիկ անկեղծորեն կարեկցո՞ւմ, թե՞ մտքներում չարախնդում էին: Սրտնեղում, նյարդայնանում էր, որ իր այգու ջրի խնդիրը «կեղականի պերնի ծամոնն ի տառցիր»:

Համոյին նա Ակոբենց տանձենիների շվաքում գտավ՝ հաստաբուն ծառին թիկն տված, արջի ախորժակով տանձ խժռելիս: Գեղամը կտրուկ երկու պայման դրեց ջուրվարի առջեւ՝ կա՛մ ջուրը տա, «կա՛մ էլ կրակի տաս, վառես քո չորցուցած էգին»:

– Քեզ մի կոտորի իզուր,– անվրդով ասաց Համոն,– ճիշտը կոլխոզի գրասենյակ էթալդ ի...

– Լա՛վ, շատ աղեկ,– ասելով՝ Գեղամը հետ դարձավ:

Թող Համոն կարծի, թե իր խորհրդին ականջալուր՝ Գեղամը գնաց կոլխոզի գրասենյակ, եւ թող միամիտ մնա, իր տանձն ուտի ու մի քիչ էլ ննջի ծառերի շվաքում, ականջը՝ առվակի ջրի անուշ կարկաչին...

Հրաշեկ արեւը երկնքից սկսել էր կրակ թափել: Գեղամի հոգին էլ ներքին խռովքից էր հրդեհվել, նյարդերը պրկվել էին: Արագաքայլ, ամենակարճ ուղիներով նա Չիլինգարենց արգելափակին հասավ թե չէ, բահի մի հարվածով դեն շպրտեց Համոյի դրած ցեխե «պեչատը»: Երկաթաձողով ու բահի պողպատե ծայրով լինգ արեց, բարձրացրեց ջրի փականի լայնաթիթեղ շեղբը, ճիգով հետ պտտեց պնդոցակը: Ջուրը ֆշշալով ափեափ լցվեց չոր առվակի հունը ու վազեց ցած, ասես ինքն էլ կարոտով շտապում էր որպե առաջ հասնել, հագուրդ տալ պապակ այգուն:

Ջրի հոսքից առաջ քրտնամխած վազում էր Գեղամը՝ արագ-արագ շտկելով իր այգին տանող ջրատարի բանդերը:

Եկա՛վ, հախուռն եկավ ու քչքչալեն այգի մտավ այնքա՛ն ըղձալին... Անապատի մշտածարավ, ճաքճքած շրթունքներով, բեդվինից էլ ավելի ջրակարոտ այգու չոր հողն ագահորեն ներծծում էր զովասուն հեղուկը: Բացված խոր-խոր ճեղքերն առատորեն լցվում էին կենարարով՝ ընդերքից օդի բյուրավոր պղպջակներ արձակելով: Ուշագնաց ջրխմիկ արմատները զվարթացած՝ վազին վայրկենապես հասցրին անուշիկ ջրիկ, փրկարար ջրիկ, թա՛նկ ջրիկ...

Գեղամի սիրտը փառավորվել է՝ մահամերձ այգին վերջապես ջրվում է... Սակայն նրա սրտում նաեւ ահ կա՝ Համոյի սուր աչքը շուտով նկատելու է առուների ջրի մակարդակի իջնելը, եւ ուր որ է՝ հայտնվելու է այստեղ... Գոնե հասցնի ամբողջը ջրել...

Թումբ առ թումբ ահա լցվում է Արագած լեռան հավերժական ձյան հալոցքի աղբյուրներից սնվող Շաղվարդ գետակի

անմահական ջուրը: Գեղամի ականջին, ասես, լսելի են ջուր ըմպած վազերի անուշ քրթմնջոցն ու շնորհակալանքի մրմունջը...

Այգու կեսից քիչ ավելին էր ջրվել, երբ օդը թրատեց տղամարդկային հուժկու մի ձայն. ջուրվար Համոն էր... Եկավ ահեղաձայն՝ որպես լեռներից իջնող գարնան ամեհի հեղեղ, եկավ՝ դիվահար, գազազած՝ հայհոյանքի տարափ տեղալով, կոկորդային կենդանական անվերծանելի բղավոցներով, երկաթե բանալին սպառնագին օդում ճոճելով...

Աչքերից շանթ էր ժայթքում, բերանից՝ փրփուր:

– Տու էդ քանի կլխանի ես, որ իմ պեչատը քանդես, այ ես քո...– ասելով՝ կատաղած Համոն երկաթե ծանր բանալին թափով վրա բերեց Գեղամի ուսի ու թիկունքի ուղղությամբ, սակայն վերջինս կարողացավ ճարպկորեն խույս տալ եւ բահը երկու ձեռքով վահան դարձնելով՝ հմտորեն կասեցրեց հարվածը: Ուսոսկրի կամ թե կողոսկրերի փոխարեն բահի պոչը ջարդվեց, իսկ ջուրվարի գործիքը հարվածի թափից մի կողմ թռավ...

Համոն հիմա էլ հուժկու բազուկները գործի դրեց: Հաղթանդամ, ուժեղ ջուրվարն առյուծի վստահությամբ հարձակվեց հովազի ճարպկություն ու ճկունություն ունեցող Գեղամի վրա, եւ... այգու բացատը կարծես թե առյուծի ու հովազի անհավասար կռվատեղի էր: Համոն գետնին տապալեց հակառակորդին, ծնկեց կրծքին եւ ջլապինդ մատներով, քանի ուժ ուներ, անողոքաբար սեղմում էր Գեղամի կոկորդը: Մոլեգնածի գլխից թռել էին ողջամտությունն ասվածը, աշխարհն ու նրա օրենքները... Գազանին հատուկ բնազդով նա միայն խեղդել, խեղդամահ անել էր ուզում իր զոհին...

Գեղամի փորձերը, գերլարված ճիգերը՝ ազատվելու գազանացած Համոյի ճանկերից, անհաջող էին: Խռխռում, բերանից արյուն-փրփուր էր թափում, ցավից աչքերը շաղվել, շուռ էին եկել իրենց բներում, ահա-ահա կորցնում է եւ գիտակցությունը...

Օրհասական այդ միջոցին մահամերձի նրա կիսամթագնած ուղեղում փրկության հույսի մի ճառագայթ շողաց. գրպանում դանակ կա... Ձեռքերը գրպանները տարավ ու մեկում գտավ դանակը... Հանեց ծալովի դանակը, որը դեռ պետք էր բացել... Ձեռքերն իրար չէին հասնում: Ոտքերին ուժ տվեց, մի կերպ բարձրացրեց մեջքն ու ծանրամարմին Համոյին... ➥ *էջ 8*

Մի՛ գաղթեք...

Հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ, խմբագիր, մանկավարժ, գրող եւ հրապարակախոս Մկրտիչ Փորթուգալյանը բուռն եւ արդյունավետ գործունեություն է ծավալել 19-րդ դարի երկրորդ կեսին եւ 20-րդ դարի սկզբներին: Նա 1880-ական թթ. առաջին կեսին Վան քաղաքում հիմնադրել է ուսումնական նոր օջախ՝ Կեդրոնական վարժարանը, որը դարձել է Վան-Վասպուրականի կրթական տիպար հաստատություն: Շատ վառ երազանքներ ու մտահղացումներ ուներ Մկրտիչ Փորթուգալյանը հայրենի երկրում իրագործելու, սակայն 1885 թվականի գարնանը թուրքական իշխանությունները նրան՝ որպես անցանկալի ու անբարեհույս անձի, վտարում են Վանից: Գալով ծննդավայր՝ Կ. Պոլիս, եւ համոզվելով, որ իշխանություններն այստեղ եւս հանգիստ չեն թողնելու իրեն՝ ստիպված է լինում բռնել վտարանդիության ճանապարհը: Կ. Պոլսից անցնում է Ֆրանսիա եւ հանգրվանում ծովափնյա Մարսել հայաշատ քաղաքում, որտեղ 1885 թ. օգոստոսի 1-ին հրատարակում է «Արմենիա» հասարակական-քաղաքական լրագրի անդրանիկ համարը:

Հեռանալով մայր երկրից՝ Մկրտիչ Փորթուգալյանը հոգեւոր ու բարոյական առումներով երբեք չի խզում կապերը հայրենի ժողովրդի հետ: Ավելին. «Արմենիա» պարբերականը դառնում է ազատական այն միակ լրագիրը, որի էջերում անխնա մերկացվում էին համիդյան ռեժիմի հայահալած ու հայաջինջ քաղաքականության ամենօրյա դրսեւորումներն արեւմտահայկական գավառներում:

Այս լրագիրը արեւմտահայության համընդհանուր բողոքի հավաքական ճիչն էր՝ ուղղված նախեւառաջ քաղաքակիրթ կոչված Եվրոպային ու ողջ մարդկությանը:

«Արմենիա» միանգամից ներխուժեց արեւմտահայերի ու արեւելահայերի, եվրոպաբնակ ու ամերիկաբնակ բազմաթիվ գաղութահայերի օջախներ՝ նրանց վերստին տոգորելով հայրենասիրության, ազատ, անկախ ու արդար հայրենիք ունենալու գաղափարներով եւ հուսադրությամբ:

Այն առավել սպասված էր արեւմտահայերի շրջանում, քանզի տիրող համընդհանուր հուսահատության եւ հիասթափության մթնոլորտում պարբերականը հավատ ու լավատեսություն էր արթնացնում գալիք ժամանակների հանդեպ: Պետք է նշել, որ թերթի առաջին տարվա բաժանորդների ¾-ը հենց օսմանահպատակ հայերն էին:

Թուրքական իշխանությունները սվիններով ընդունեցին «Արմենիայի» մուտքը կայսրության տարածք: Սկսած 10-րդ համարից՝ այն արգելվեց: Թեեւ վերոնշյալ իրողությունը մտատանջության մատնեց Մկրտիչ Փորթուգալյանին, սակայն չվհատեցրեց: Նա սառնասրտորեն պնդեց, որ «....այդ արգելք պատճառ չլինիր մեր թերթի հրատարակութիւնը դադարեցնելու» («Արմենիա», Մարսել, 1885, թիւ 10):

«Արմենիայի» խմբագրապետը մշտապես արծարծում էր արեւմտահայության շուտափույթ ազատագրման անհրաժեշտության խնդիրը: Քաջածանոթ լինելով հայրենաբնակ ժողովրդի իրապես ողբերգական կացությանը՝ նա տագնապում էր, որ թուրքական բիրտ տիրապետությունը կարող է ավարտվել հայոց հայրենիքի ամբողջական կորստով: Աչքի առջեւ ունենալով 19-րդ դարավերջի թուրք-օսմանյան բռնաճնշումների եւ հայաջինջ կոտորածների սարսափելի պատկերը՝ մեծ հրապարակախոսը ողջ քննադատության տարափի սլաքն ուղղեց վերոնշյալ իրականության դեմ:

Սկսած առաջին իսկ համարներից՝ թերթն ուշադրության առանցքում պահեց արեւմտահայ ամենահոծ զանգվածի՝ հայ գյուղացիության հիմնախնդիրները: Տեղերից ուղարկված թղթակցություններն ազդարարում էին իրական ճշմարտությունը հայ ժողովրդի աննախադեպ թշվառ եւ ողբերգական կացության վերաբերյալ: 1895–1896 թթ. կոտորածներից հետո սարսափելի, աննախադեպ աղքատության, սովի եւ մահվան ուրվականներով լեցուն պատկերն էր արեւմտահայկական բնակավայրերի մեծագույն մասում:

Իսկ կոտորածներից հետո դեռ առջեւում էր ամենադժնդակ իրողությունը՝ համատարած սովը:

1895 թ. «Արմենիան» ահազանգում էր. «Սով, այո՛, մեր այս աւուր միակ մտածելիք սովն է, որ արհաւիրք կոտորածներու պիտի յաջորդէ անարգել, արդի բացարձակ անապահովութեան պատճառաւ ոչ մէկ երկրագործ չի պիտի համարձակի մշակութեան ձեռնարկել, որով սովն աւելի ընդհանուր, աւելի ահաւոր պիտի լինի, քան 1879–1881 թթ.» («Արմենիա», 1895, թիւ 68):

Մկրտիչ Փորթուգալյանը հուսահատության ճիրաններից դուրս գալու ելք է համարում նոր վերելքին փոքրիկ գործերով նախապատրաստվելը: 1900 թ. նոյեմբերի 28-ին թերթում հրապարակված «Ամօթ յուսահատողներին» հորդորակով հիշեցվում էր, որ հայ ազգի պաշտելի բանաստեղծ, ազատության երգիչ Գամառ-Քաթիպան «....կարդում էր ամօթ, յաւիտենական ամօթ փոքրոգի յուսահատողներին: Իսկ այսօր, դժբաղդաբար, մեր մէջ մի ահագին բազմութիւն կայ, յուսահատ, անհաւատ դէպի ազգի ազատութեան հուսալից ապագան» («Արմենիա», 1900, թիւ 13):

Հավատարիմ իր սկզբունքային դիրքորոշմանը՝ պարբերականը 20-րդ դարասկզբին նորից ու նորից ամրապնդում, զարգացնում է այն տեսակետը, որ արտասահմանում ծավալված ազգային-հեղափոխական ցանկացած գործունեություն երկրորդական է, քանզի բուն երկրում է գործելու իրական ուժը: Իսկ առանց այդ «հարազատ ուժին, որ ժողովրդին մէջ ծնած, զինք պիտի ոգեւորէր եւ առաջ մղէր, դրսի օգնութիւններ ոչ միայն օգտակար չեն կրնար լինել, այլ՝ գուցէ վնասակար....» («Արմենիա», 1901, թիւ 34):

Իսկ 1890-ական թթ. կեսերին տեղի ունեցած կոտորածներից հետո արեւմտահայության մեծ մասը, խիստ հուսահատության պատճառով, հեղափոխությունը «չարիք մը կը նկատէ, իսկ այն փոքրամասնութիւն, որ յեղափոխութեան կը հաւատայ, այլեւ Հայաստանի ճնշիչ օդը շատ սահմանափակ եւ նեղ գտնելով, իրեն շունչը ազատ երկրներ միայն կառնէ» (անդ): Իսկ արտագաղթի ալիքը սպառնում է ժողովրդագրական նորանոր աղետների սկիզբ դառնալ:

Ահա թե ինչու պարբերականն արեւմտահայ երիտասարդության՝ հայրենիքը «լքանելը դաւաճանութեան հաւասար գործ մը համարելի է» բնորոշումն է տալիս:

Արտագաղթը մեծապես խրախուսում էին թուրքական իշխանությունները, քանզի Արեւմտյան Հայաստանի հայաթափումով լուծվում էր թրքության համար պատուհաս ու գլխացավանք դարձած Հայկական հարցը:

Մկրտիչ Փորթուգալյանը եւ պարբերականի շուրջ հավաքված գործիչները քաջ գիտակցում էին, որ 19-րդ դարավերջին եւ 20-րդ դարասկզբին հայ-թուրքական կնճիռն ընդունել է ծայրահեղ լարվածության ու թշնամանքի անդառնալի ընթացք, եւ հայ ժողովրդի ու թուրքական իշխանությունների միջեւ հաշտության կամուրջները փլուզվել են:

1901 թ. փետրվարի 20-ին վերոնշյալի վերաբերյալ թերթն ուղիղ եւ բացորոշ հայտնում է. «Հայութեան եւ թրքութեան միջեւ անջրպետն արդարեւ այնքան լայնացած է եւ խորունկ, որ այլապէս դարմանումը երազ մը պիտի լինէր....» («Արմենիա», 1901, թիւ 25): Ուրեմն՝ եթե հաշտեցումն ու դարմանումն անհնարին էին, ապա սկսված մաքառումն ու կռիվը պետք էր շարունակել: Իսկ այդ գործընթացը շարունակելու համար անհրաժեշտ էր, որ հայությունը չլքեր իր հարազատ հողն ու երկիրը:

Թերթի էջերում ամեն առիթով նորից ու նորից հորդորվում էր, որ գոնե «....ասոնք հասկնայինք եւ հասկցնէինք մեր ժողովրդին, թէ իր յոյս, միակ յոյս իրեն վրայ դնելու է: Թէ ո՛չ թուրքի բարեացակամութեան ապաւինելը եւ ո՛չ էլ օտար միջամտութեան մը յոյսերով օրօրուելը չպիտի կրնան բան մը առաջացնել» («Արմենիա», 1904, թիւ 5): Ամեն տարի տասնյակ հազարավոր հայեր զոհ էին գնում կայսրության տարածքում պարբերաբար կրկնվող բռնություններին ու ջարդերին, սովին, գաղթականության եւ պանդխտության արհավիրքներին, որոնք երկրում տիրող ողբալի կացության հետեւանքն էին: Հատկապես արտագաղթը ջլատում էր հայության թե՛ ռազմական եւ թե՛ բարոյական ուժերը: Այն սոսկալի հյուծում, ուժասպառ էր անում, քանզի հեռանում էին ուժեղ եւ առողջ այրերը, որոնք կարող էին երկրի ներսում իրավիճակ փոխել: Նրանց հեռանալով՝ ոչ միայն անմշակ ու խոպան էին մնում հայրենական այգիներն ու արտերը, այլ նաեւ պակասում էր այն ջլապինդ բազուկը, որը կարող էր զենք վերցնել եւ թուրք-քրդական հրոսակներից պաշտպանել տունուտեղը, հարազատներին ու հայրենակիցներին:

Չբավարարվելով «Արմենիայի» էջերում հրատարակվող հոդվածներով՝ Մկրտիչ Փորթուգալյանը 1913 թ. Մարսելում տպագրեց «Մի՛ գաղթէք» խորագրով գրքույկը, որում զետեղված էին պարբերականում լույս տեսած կարեւորագույն հրապարակումներն այդ թեմայով: Գրքույկը տպագրվել էր «Արմենիայի» տպարանում: Նրա ներածականում հեղինակը նշում է, որ հայության՝ դեպի Ամերիկա գաղթի չափազանց մեծ հոսքը Հայաստանի ազգաբնակչության հետզհետե նվազման ու երկրի ամայացման պատճառներից է: Խարանվում են դեպի Ամերիկա գաղթողների անհիմն լավատեսությունն ու ագահ հաշվարկները: Այդ շլացուցիչ հրապուրանքը հեռու է իրականությունից, քանզի այնտեղ մեկնող հարյուրից միայն տասն է հաջողում: Մնացյալ 90-ի թշվառությունն իրականում չեն տեսնում ու չեն զգում: Մինչդեռ այդ «90-ի մէջ շատեր կան, որոնք եթէ երկրին մէջ մնային եւ այնտեղ յանձն առնէին ենթարկուիլ այն դրամական ծախքերին, նեղութիւններին ու չարաչար աշխատանքներին, որ յանձն կառնեն Ամերիկա երթալու ճանապարհին վրայ եւ Ամերիկայի մէջ, պիտի կրնային համեմատապէս աւելի լաւ դիրք մը ունենալ իրենց երկրի մէջ եւ աւելի առողջ ու հեշտին կեանք մը վարել» (*Մ. Փորթուգալեան*, Մի՛ գաղթէք, Մարսել, 1913, էջ 1): Գրքույկում մեկ առ մեկ հերքվում են օտար երկրներում արագ հարստանալու եւ հեշտագին կյանքով ապրելու շրջանառվող վարկածները:

Եվ հակառակը. խորապես հիմնավորվում են հայրենի հողում մշտապես ապրելու եւ գործելու առավելությունները:

Հեղինակը մատնանշում է, որ խոսքը «չվերաբերիր, անշուշտ, այն սակաւաթիւ անձերին, որոնք արհեստ կամ գիտութիւն սովրելու նպատակով կերթան Ամերիկա եւ կուզեն վերադառնալով օգտակար լինել իրենց հայրենիքին» (անդ, էջ 5): Նախատինքի խոսքը հասցեագրված է այն մարդկանց, որոնք առանց որեւէ ծրագրի եւ նախապատրաստության, իրենց տուն ու տեղը թողնելով, հայտնվում են գաղթողների ընդհանուր հոսքի մեջ: Մինչդեռ նրանք, հայրենի երկրում մնալով, «շատ մը յուսախաբութիւններէ եւ ատոնց հետեւանքն եղող թշուառութիւններէ զերծ պիտի մնային՝ հայրենի տան մէջ վայելելով ընտանեկան քաղցրութիւնները» (անդ, էջ 6):

Օրինակներ են բերվում հայրենի հողի՝ որպես անսպառ հարստության շտեմարանի վերաբերյալ. «Երբ 1876-ին Խարբերդէն անցնելով Տիգրանակերտի եւ Բաղեշի վրայով՝ կերթայի Վան՝ առաջին անգամը լինելով, Խարբերդի արգաւանդ դաշտավայրը դիտած ատենս՝ ձիապանները պարծանքով կը կրկնէին ինձ ժողովրդին մէջ տարածուած այս առածը, թէ Խարբուռ օվասը՝ ալթը եուվասը (Դաշտը Խարբերդի բույն է ոսկիի): Թէեւ առայժմ փշով ու տատասկով նոյնիսկ ծածկուած լինի այդ ոսկիի բոյնը, որի՞ կը թողուք զայն բոլորովին եւ կելնէք բաղդ որոնելու համար օտար աշխարհներ գաղթել ահագին բազմութեամբ, ո՛վ խարբերդցիներ մասնաւորապէս եւ թիւրքահայաստանցիներ ընդհանրապէս» (անդ, էջ 9):

Մկրտիչ Փորթուգալյանն ընդգծում է, որ հայության՝ օտար երկրներ գաղթելու սույն գործընթացը վտանգավոր է ոչ միայն անհատական, այլ նաեւ ազգային առումով, քանզի այն ժողովուրդը, որն իր ոտքերի տակ սեփական հող չունի, չի կարող հարատեւ կանգուն մնալ: Հայը Հայաստանո՛վ կարող է կենսունակ մնալ որպես ազգ: Հայաստանից դուրս, վաղ թե ուշ, հայությունը կորստյան կդատապարտվի:

Եվ միայն հայերի հետ չէ, որ այդպես կպատահի, այլ նաեւ յուրաքանչյուր ազգի, որը հեռանում է իր բնօրրանից եւ դառնում տարագիր: Պանդուխտները մի քանի սերունդ հետո կորցնում են իրենց ազգությունը եւ ձուլվում տեղի ժողովրդին. «Հայոց պատմութենէն գիտենք արդէն, որ հայեր մի քանի անգամ գաղթած են Եւրոպա, ուր հարիւր հազարներով թիւեր կազմած են, ո՞ւր են այժմ այդ հայեր, ի՞նչ եղան: Ձիրենք հիւրընկալող ազգերին մէջ խառնուեցան ձուլուեցան, մի քանի տեղեր բռնի եւ ուրիշ տեղեր ալ կամաւ կամ անզգալի կերպով» (անդ, էջ 15):

Ըստ Մկրտիչ Փորթուգալյանի՝ ձուլման եւ որպես ազգություն անէացման վտանգը հատկապես սոսկալի է ԱՄՆ-ում բնակություն հաստատող հայերի համար, քանզի Ամերիկան «հսկայագործ խառնարան մը է, ուր շատ մը կողմերէ գնացած այլազան ազգութիւնների հատուածներ, խառնուելով տեղացիներին հետ, կը ձուլին հետզհետէ, եւ իրենք ալ կը կազմեն Ամերիկեան ազգութիւնը» (անդ, էջ 25–26):

Անչափ բնութագրական է, որ մեծանուն հայրենասերը արտագաղթը համարում է անարյուն կոտորած...

Դրանով նա իր հայրենակիցներին հուշում է, այսպես կոչված, սպիտակ եղեռնի իրական վտանգների եւ ահռելի չափեր ընդունած արտագաղթի հեռանկարների մասին:

Այսպիսով՝ 19-րդ դարի երկրորդ կեսին ազգային-հասարակական վիթխարի գործունեություն ծավալած Մկրտիչ Փորթուգալյան անուն-ազգանունով մեծ հայրենասերը զգուշացնում է, որ չպետք է լքել հայրենի եզերքը, ուրանալ հայությունն ու հայկականությունը: Հայրենիքը թողնելով՝ նպաստում ենք թշնամու առաջխաղացմանն ու արմատավորմանը: Ուրեմն՝ յուրաքանչյուր հայ, մնալով հայրենիքում, զորացնում է հայությանը:

Եվ հակառակը. հայրենիքը լքելով՝ առավել տկարացնում ու թուլացնում ենք մեր հայրենակիցների ուժերն ու դիրքերը: Սա մի ճշմարտություն է, որ խիստ արդիական է նաեւ այսօր:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Սկիզբը՝ թիվ 11–14

Ռաֆֆու «Դավիթ Բեկ» պատմավեպը

Նորից երեւում է Ֆաթալի խանը՝ կռվին նախապատրաստվելու իր սովորույթներով. ոսկի ու արծաթ է շաղ տալիս ամբոխի առաջ՝ նրան հակառակորդի դեմ գրգռելու մոլեռանդությամբ, դերվիշների հետ գուշակություններ է անում: Պատերազմը եղվարդ գյուղի դաշտում էր, որին ասում են Շուշանների դաշտ: Ռաֆֆին ոչ թե նկարագրում է պատերազմը, այլ պատմում է դրա մասին, ասում, թե ինչ եղավ: Հրամանատար Թորոս իշխանն սպանվում է, Բալի զորավարը վիրավորվում է պարանոցից, վիրավորվում է նաեւ Ֆաթալի խանը, սպանվում է նրա կրտսեր եղբայր Աղասի խանը: Այդ սարսափելի կոտորածից հայ զորապետերից փրկվում է միայն մելիք Նուբարը՝ իր հազար չորս հարյուր զինվորների հետ:

Հայոց զորքը այս ճակատում պարտվում է:

Դեպքերի 17 տարվա վաղեմությամբ հայտնվում է Սյուրին, աղջիկը՝ Ֆաթիման, արդեն չափահաս էր, իսկ նա շարունակում է իմացած լուրերով գաղտնի օգնել հայրենակիցներին: Ստեփանոս Շահումյանն ու Սյուրին հանդիպում են: Ֆաթիման հարցնում է մորը. «– Այդ ո՞վ է, մայրիկ:– Քո հայրը, զավակս,– պատասխանում է մայրը» (էջ 513):

Պատերազմից հետո մելիք Ֆրանգյուլին սպանում է դարանակալ Ստեփանոս Շահումյանն ու սպանված տեղում էլ՝ ճանապարհի վրա, թաղում՝ հեռու հասարակաց հանգստարանից՝ «....ննջեցյալների հանգիստը չպղծելու համար» (էջ 450):

Վեպն ունի նաեւ «Վերջաբան», որտեղ Ռաֆֆին ամփոփում է եւ դիպաշարը, եւ պատմական դեպքերի հաջորդական ընթացքը: Թեեւ Թորոս իշխանն այդ ճակատում պարտվեց, բայց Դավիթ Բեկն ազատագրական ընդհանուր պայքարում հաղթեց: Պարսիկներին քշեցին, բայց եկան օսմանցիները: Դավիթ Բեկը տեր Ավետիսի ու Մխիթար սպարապետի հետ մեկտեղ մի քանի նոր հաղթանակներ է տանում, հալածում ու դուրս շպրտում օսմանցիներին եւ վերականգնում ժողովրդի հավատը սեփական ուժերի հանդեպ: Հիմա արդեն պարսիկները հայերի կողմն էին՝ ընդդեմ թուրքերի: Ուղտերի քարավանով տաջիկների գլուխները նվեր ստանալուց հետո պարսից շահը Դավիթ Բեկի հետ դաշինք է կնքում, հրամանագրով նրան է շնորհում Կապանի ամբողջ գավառը՝ որպես սեփականություն, կարգում գլխավոր իշխան Սյունյաց եւ Գողթան նահանգների «....եւ հրաման տվեց իր անունով դրամ կտրել: Դավիթը այժմ հասած էր իր բաղձանքին, նա իր ազատ հայրենիքի տերը եւ իշխանն էր: Այդ եղավ 1727 թվին: ....Բայց նա իսպառ իր նպատակները իրագործել չկարողացավ, որովհետեւ հիվանդացավ՝ վախճանեցավ իր տան մեջ 1728 թվին՝ վեց տարի միայն վարելով իր իշխանությունը: Դավթից ժառանգ չմնաց, շատ հավանական է, որ նա ամուսնացած եւս չլիներ: Նրա մահից հետո զորականքը միաբանվելով՝ ընտրեցին Դավթի տեղ Մխիթար սպարապետին» (էջ 518–519):

Մխիթար սպարապետի նստավայրը Խնձորեսկն էր: Թուրքերից նա մաքրում է հայրենի երկիրը, բայց «Մխիթարի իշխանությունը երկար չտեւեց, որովհետեւ 1730 թվին նույն հայերից հրացանազարկ լինելով մեռավ՝ երկու տարի միայն իշխելով» (էջ 520): Ակնարկ կա նաեւ տեր Ավետիքի մասին, իսկ «Դավթի գործակից մյուս քաջերի մասին լռում է պատմությունը....» (էջ 520):

Նշելով զորավար Դավիթ Բեկի հերոսական



գործունեության 300-ամյակը, հիշելով նրա մասին եղած պատմական վկայությունները՝ պետք է արժանին մատուցենք նաեւ Մեծ Հայ Ռաֆֆուն, որը գեղարվեստորեն կերտեց ու ժողովրդի համար սիրելի դարձրեց նրա կերպարը: Սերունդներ են կրթվել այդ վեպով, եւ հերոսներ են ծնվել այդ վեպից: Շատ վտանգներով լեցուն մեր գոյապայքարի ճանապարհին գրականության սպարապետ Ռաֆֆու հրամանատարությամբ քաջարի հերոսներով կռվող մի անպարտ զորաբանակ էլ եղել է այս վեպը: Փառք Ռաֆֆուն եւ համազարկային եռագույն հրավառություն նրա պատվին:

«Դավիթ Բեկ» վեպի դասերը կենդանի են նաեւ այսօր, երբ հայ ժողովուրդը դժվարությամբ կերտում է իր ազատ ու անկախ պետականությունը: Ժամանակները փոխվել են, բայց անկախ ու ազատ ապրելու խնդիրները մնում են, որոնք թե ներքին են, թե արտաքին: Ներքինը վերաբերում է համազգային միաբանությանը, արտաքինը՝ թուրք-ադրբեջանական սադրանքներին, որոնց թիկունքում նաեւ մեծ երկրների շահերն են: Ինչ անել՝ ծնվի՞ մի նոր Դավիթ Բեկ, դա իր հերթին, անձնազոհ, նվիրված հայը միշտ էլ պետք է ժողովրդին, եւ նրանցից շատերը հերոսացան արցախյան առաջին պատերազմում: Բայց այսօր միայնակ հերոսը որքան էլ հարգի է, այնուամենայնիվ հարցերը լուծվում են աշխարհաքաղաքական այլ ընդգրկումներով:

Անկանխակալ մտայնությամբ պարզ նայենք իրականությանը՝ ռուս-ուկրաինական պատերազմն է մեր աչքի առաջ. ամբողջ արեւմտյան համագործակցությունը պաշտպանում է Ուկրաինային: Իսկ մեր՝ հայ-ադրբեջանական պատերազմի ժամանակ քանի՞ երկիր ձայնը բարձրացրեց հօգուտ հայության եւ նյութական ու ռազմական օգնություն ցուցաբերեց: Սա մնում է որպես հռետորական հարց...

Միջանկյալ ասեմ՝ այդ մենք էինք՝ մի բուռ մտավորականներ ու գիտնականներ, որ մեր երկու-երեք ամսվա համեստ աշխատավարձը հավաքեցինք եւ հանուն ազգային բանակի ուղարկեցինք համահայկական հիմնադրամի հասցեով ու չգիտենք՝ իր նպատակին ծառայե՞ց արդյոք այդ գումարը, թե՞...

«Դավիթ Բեկը» մի վեպ է, որը պետք է դասագիրք լինի ռազմական բոլոր ուսումնարաններում. այն պարտավոր են կարդալ եւ ուսումնասիրել շարքային զինվորից մինչեւ գեներալ, նախարար ու շտաբի պետ: Այստեղ ոչ միայն ոգին է, այլեւ ռազմական արվեստը, նաեւ երկրագիտությունն ու տեղագրությունը:

Եվ, ի վերջո, ո՞վ է այսօրվա հայը՝ Դավիթ Բեկի՞ զարմից է նա, թե՞ մելիք Ուրացողի: Ամենեւին նա չէ հայը, որ քոչն առած դասալիքի պես փախչում է հայրենիքից. մեկ սերունդ հետո նրանք կորած են ազգության համար: Բացառիկ դեպքերն օրինաչափություն չեն: Նա՛ է հայը, ով ապրում է իր հայրենիքում, այստեղ ծնում, սնում ու բազմացնում իր զավակներին եւ նրանց փոխանցում ազգային հիշողություն, որ մայրենի լեզուն է, հայոց պատմությունը եւ հայ արվեստն ու մշակույթը: Այսօր էլ հեշտ չէ Հայաստանի վիճակը: Արտաքին թշնամին նույնն է, արտաքին վտանգները նույնն են, ներքին անմիաբանությունը խորանում է, եւ ազգային վիճակը չի կայունանում: Անկախությունը շատ մեծ պարգեւ է, բայց եթե այն չի ամրապնդվում պետության անվտանգությամբ, ժողովրդի միաբանությամբ, տնտեսության զարգացմամբ, բնակչության բարեկեցությամբ, ազգային արժեքների գնահատությամբ, արվեստի ու մշակույթի բարձրացմամբ, ուրեմն՝ ինչ-որ բան տեղում չէ, ինչ-որ բան այնպես չէ:

Պետական այն կառույցը, որն այսօր կոչվում է Հայաստանի Հանրապետություն, որը մեր հայրենիքն է՝ բազմաթիվ սերունդների երազանքի արտահայտությունն է: Ազատ հայրենիք ունենալու մասին քանի՜ պատմագիտական, գրական-գեղարվեստական գրքեր են գրվել... Այդ երազանքն իրականացել է մասնակի, այդ երազանքը լիարժեք չէ, ունենք բազմաթիվ խնդիրներ եւ առաջին հերթին Արցախի հարցը, որտեղից ամեն օր մտահոգիչ լուրեր են լսվում...

Հովհաննես Թումանյանի ասածը նույնն է նաեւ այսօր, ըստ որի՝ մենք քիչ բարեկամ ու շատ թշնամի ունեցող ժողովուրդ ենք: Մեր անհաջողությունները ոչ միայն ռազմի դաշտում են, այլեւ դիվանագիտության մեջ: Ո՞ւր են մեր դիվանագիտական հաջողությունները, երբ որեւէ երկիր Արցախի ազատագրման այս տարիների ընթացքում չհասկացավ, որ Արցախը Հայաստան է: Իսկ ՌԴ նախագահ Վ. Պուտինը պարզորոշ հայտարարեց. «Ղարաբաղը Ադրբեջան է»: Եվ սա ասում է «միակ» բարեկամը կամ գոնե այդպես ներկայացողը: Զբոսայցային մեր դիվանագիտությունը պետք է դառնա գործնական եւ խնդիրներ լուծի: Մինչդեռ այդպես չէ: Եվ ազգային չկայացածությունից բխող խեղճությունն ամենուր է, ինչն էլ կոտրում է ժողովրդի ոգին ու երբեմն այն աստիճանի, որ անգամ ազգությունն են ուրանում... Այդպես չլինելու համար ժամանակին պետք է համարժեք հակահարված տրվեր Հրանտ Դինքին սպանողին, Գուրգեն Մարգարյանին սպանողին, մի գործողություն պիտի արվեր Հունգարիայի դեմ, որը մարդասպանին ծախեց իր տիրոջը: Այդպես չլինելու համար մեր վրայից պետք է մաքրենք պարտության ամոթը: Հարեւան պետություններն իրենց երկրի ու ժողովրդի վաղվա օրվա մասին են մտածում, իսկ մե՞նք...

Այո՛, մեր ներկա հայրենիքը բազմաթիվ սերունդների երազանքի ու ջանքի արտահայտությունն է, որն ունի չլուծված բազմաթիվ խնդիրներ՝ եւ այնպիսիները, որոնք մեր ձեռքում են, եւ այնպիսիները, որոնք մեզ պարտադրվում են: Բայց այնպես չլինի, որ այդ խնդիրներն արդյունավետ լուծելու փոխարեն եղածն էլ կորցնենք, ինչպես ասում են՝ ունքը շինելու փոխարեն աչքը հանենք: Իսկ այդ վտանգը կա: Արցախի վերջին պատերազմում կրած պարտությունը կոտրեց մեր մեջքը: Ի վերջո, հիմա էլ՝ 21-րդ դարում, հարցերը պատերազմի դաշտում են վճռվում: Մնացածը՝ հաղթանակի արդյունքը թե պարտության հետեւանքը, սրի զորությամբ է չափվում: Մենք անընդհատ աչքներս ճանապարհին ենք հառել՝ օգնություն ստանալու հույսով, բայց սպասումները չեն արդարացել: Ու մնացել ենք այսպես պարտության ամոթն ու բազմատեսակ հետեւանքները շալակած, հակառակորդին դիմագրավելու փոխարեն սկսել ենք մեր մեջ դավաճաններ որոնել ու թշնամու արշինով ինքներս մեզ չափել:

Բավական է: Պատմությունն ու Դավիթ Բեկը մեզ սթափության են կոչում: Բոլոր մանր, անձնական, նեղկուսակցական շահերը թողնենք մի կողմ եւ ուժ գտնենք միաբանվելու ու համատեղ ելք որոնելու: Ինչպես ժամանակ առաջ, հիմա էլ հայրենիքը մեզ է կանչում: Անսահման Չարենցը կասեր (ԵԺ, IV, 1968, էջ 37).

Հասել ենք մենք արդեն այն սահմանին,
որից
Սկսվում է մի նոր ու դժվարին վերելք:
Սին տենչերի փոշին մեր խոհերից քերենք
Եվ ճանապարհ ընկնենք, մեծ
ճանապարհ նորից:

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Արվեստի վաստակավոր գործիչ

Ամեն ինչ քո ձեռքերում է

Մի իմաստուն եւ արդար ծերունի է լինում: Իր առաքինության եւ խոնարհության համար արժանանում է Աստծու շնորհին. մարդիկ օգնության խնդրանքով դիմում են նրա՝ մի խորհուրդ, իմաստուն խոսք լսելու եւ մխիթարություն ստանալու համար: Եվ ահա հայտնվում է նենգասիրտ մեկը, որը ցանկանում է փորձել ծերունուն, ստուգել՝ արդյոք իրապես իմաստո՞ւն է: Այս մարդը գնում է մի ծաղկած պարտեզ, բռնում մի գեղեցիկ թիթեռ եւ այն պահում իր ափի մեջ: Ապա գալիս է ծերունու մոտ եւ հարցնում է. «Ասա՛, խնդրեմ, իմ ձեռքի միջի թիթեռնիկը ո՞ղջ է, թե՞ սատկած»:

Այս չարամիտ մարդը հաշվարկել էր այնպես, որ եթե ծերունին պատասխանի՝ «Ո՛ղջ է», ինքն իր ափը կսեղմի ու սատկած թիթեռնիկին ցույց կտա: Իսկ եթե ծերունին պատասխանի՝ «Սատկած է», ապա ինքը բաց կթողնի կենդանի թիթեռնիկին: Բոլոր դեպքերում իմաստունը կսխալվի եւ կհեղինակազրկվի:

Նրա նենգ մտածումը, սակայն, ձախողում է. հասկանալով այս մարդու խորամանկությունն ու չարամտությունը՝ ծերունին անկեղծորեն աղոթում է նրա հոգու փրկության համար եւ ժպտալով պատասխանում. «Ամեն ինչ քո ձեռքերում է»:

Ձմրուխտ վազերի սգերգը

➥ էջ 5

Ձեռքերն իրար հասան, բացեց դանակի շեղբը եւ... գլադիատորական կենաց-մահու՝ Համոյի պարտադրած այս կռվում Գեղամին այլեւս որեւէ բան չէր մնում, քան...

Համոն անսպասելի, ահավոր ցավից սուր ծղրտաց... Մեկեն թուլացան նրա սեղմող-խեղդող մատները, փնչոցով ոտքի ելավ...

Ահասարսուռ տեսարանից երկու հակառակորդների աչքերը չռվեցին:

Ցավից մռնչալով՝ Համոն ծնկեց...

– Հավա՜ր, հավա՜ր, սպանեց ինձ էս լակոտը,– աղեկտուր բղավում էր Համոն...

Մոտիկ տներից, հարեւան այգիներից մարդիկ եկան, ձիակառք բերեցին: Վիրավոր ջուրվարին Աշտարակ՝ բազմահմուտ բժիշկ Սիմոն Սաժումյանին հասցնելու ճանապարհի կեսին՝ Օշականի Ս. Մանկանց մատուռի մոտերքում, Համոն... հոգին ավանդեց...

Գեղամը կատարվածից սփրթնած ու շվարած կանգնած էր դեռ: Ոտքերը դողդողում էին...

Այսպիսի ողբերգական վախճանով դրամա կսպասվի...

Ջուրը նրա ոտքերի մոտ հասավ: Արյուն խառնվեց ջրին... Հարավից փչող տաք քամուց սոսափող վազերը, ասես, հիմա էլ գեղջկական տխրատխուր ռեքվիեմ՝ սգերգ էին մրմնջում...

* * *

Դատարանում Գեղամն ամեն ջանք դրեց՝ ապացուցելու, որ կռվի նախաձեռնողն ու նախահարձակը Համոն էր: Ցավում է նրա մահվան համար: Ինքը դա չէր ուզում: Սակայն, երբ արդեն խեղդամահ էր լինում, ոչ գիտակցաբար, այլ ինքնապաշտպանական բնազդի թելադրանքով դիմեց դանակի... եւ այլն, եւ այլն: Մեղադյալը հասավ այն բանին, որ պատժի առավելագույն չափով՝ գնդակահարության հոդվածով չդատապարտվեց, այլ վճռվեց քսանհինգ տարվա բանտարկություն...

Ամբո՛ղջ քառորդ դար... Դեպի Սիբիր, սիբիրական դաժան ռեժիմ, դեպի անորոշ, մշուշապատ ապագա... Գնաց համալրելու ԳՈՒԼԱԳ կոչվող ստալինյան մահվան ճամբարները...

ԳՈՒԼԱԳ... Հայրենի օջախներից կտրելով միլիոնավոր անմեղ-մեղավոր մարդկանց՝ տանում լցնում էին անծայրածիր ցրտաշունչ երկրամասի մահվան զնդանները, զենքի ահով բանեցնում, քամում վերջին ուժերը... Այդ միլիոնավորների կեսը մարում էր ցրտից, մեռնում սովից, հիվանդություններից, զրկանքներից, եւ մարդն անգամ մրջյունի, մեկ գլուխ սոխի արժեք չուներ...

...Ապրանքատար վագոնային շարժակազմը հերթական անգամ յոթ հարյուր աքսորյալների ու կալանավորների, բազմօրյա փակուղային կանգառներով ու դադարներով, Սիբիր եւ Հեռավոր Արեւելք է տեղափոխում: Վագոններում՝ մարդկային մարմինների կենդանի զանգված, հակասանիտարական անտանելի վիճակ, հեղձուցիչ օդ... Կայարաններում գնացքի կանգնելուն պես ժամապահները նիգով բացում էին վագոնների մեխած դռները եւ հոխորտանքով հարցնում.

– Մեռել ունե՞ք, տվե՞ք...

Երիտասարդ Գեղամը շուրջ վաթսուն քրեականների փակ, անլուսամուտ վագոնում է, ուր տարբեր տարիքի ու բնավորության մռայլ դատապարտյալներ են՝ քարածխի վառարանի շուրջը խմբված: Էլ ի՞նչ հայ մարդ, որ չմիջամտի կրակի ընթացքին... Գեղամը կամովին հանձն առավ վառարանի գործը, շաբաթներ շարունակ այն վառեց շատ հմտորեն, որի շնորհիվ խիստ վտանգավոր, դյուրագրգիռ հանցագործների միջավայրում ապահովեց իր կյանքի անվտանգությունը՝ մինչեւ որ վերջին կայարան հասան:

Այստեղ բոլոր դատապարտյալներին իջեցրին վագոններից, բժիշկները նրանց տեսակավորեցին ըստ պիտանիության, 60–70 հոգուց բաղկացած աշխատանքային խմբեր կազմավորելուց հետո տարան ճամբարներ եւ տեղավորեցին բարաքներում: Դրանք իրականում մարդկային փարախներ էին՝ հոգեւորի ու մարմնավորի սպանդանոցներ:

Սիբլագ՝ սիբիրյան ճամբարներ անթիվ ու անհաշիվ... Ճակատագիրը սիբիրական Գեղամին էլ ո՞ր ճամբարը չնետեց՝ Վոլոգդա, Կրասնոյարսկ, Նորիլսկ, Նովոիվանովսկ, Կամչատկա, Մագադան... Տայգա՝ անծայրածիր կալանատեղի, սառցակալած անդաստաններ, ամենուր ճերմակություն՝ կուրացնող, ոսկորներ սողոսկող բուք՝ անտանելի... Անիծյալ այս հսկայածավալ սառցե երկրամասում ցրտահար մարդուն մինչեւ իսկ թվում էր, թե... արեգակի հրե գունդն էլ է մրսում...

Մարդկային խեղված ճակատագրերի անընդգրկելի այդ դժոխքում, հոգով ու մարմնով սառած-սասռած միլիոնավոր դժբախտների մտքին ու սրտին բռնության դժնի դիկտատուրան էր իշխում:

Աշխատանքային գաղութ-կալանավայրը շրջափակված էր երկաթյա փշալարերի սառցե լուսաշող, բեկբեկուն նուրբ բյուրեղիկների եղյամով. իսկը ծաղկած փշալարեր... Դրանք նույնիսկ կարող էին եւ գեղեցիկ թվալ, եթե... իրենց գործառույթով այդքան սարսափազդու չլինեին...

Գեղամի ուղեղում մեխվեց ու մինչեւ կյանքի վերջն անջնջելի մնաց հրեշավոր պատկերը՝ կալանավորի «բնական» սառցե մարդ-արձանը... Կալանավորներից հետաքրքրասեր, գուցե եւ հոգով գեղագետ մեկը, հմայված ծաղկած փշալարերի բյուրեղյա ծիածանափայլ ցոլանքների գեղեցկությամբ, անզգուշություն ունեցավ մոտենալու եւ շոշափելու դյութող բյուրեղիկները: Այդ էր՝ նույն միջոցին մշտազգոն պահակները կատաղի շներով վրա պրծան թշվառականին, արարքը համարեցին փախուստի փորձ, սակայն... նախընտրեցին տեղում չգնդակահարել: Ճաշարանից երկու դույլ ջուր բերեցին, լցրին գլուխն ի վար: Վայրկյաններ անց մարդը սիբիրյան սառնամանիքից բաց, չռված աչքերով սառեց, պատվեց թափանցիկ սառույցով ու անշարժ, անքթիթ հայացքով արձան դարձած՝ մնաց մինչեւ գարուն՝ ի ցույց եւ ի սարսափ մյուսների...

Շնչող, շարժվող, հագուստավոր կմախքների նմանվող բախտակիցների հետ Գեղամն էլ էր անտառ կտրում, գերան սղոցում կամ սառցակալած հող փորում՝ հիշելով քաղցր հեռվում մնացած այն արեւառ, բերքանուշ այգիների համբուրելի հողը...

Ծանրավիշտ, տխրատխուր օրերում նա հոգու խորքում միայն մի նվիրական փափագ էր մտմտում՝ բախտ ունենա՝ կրկին տեսնի մայր Հայաստանը, հարազատներին, ապա թող որ հանգչի, խառնվի հայոց սրբասուրբ հողին...

Յոթ, չէ՛, յոթհարյո՛ւր սար ու ձորից այն կողմ մնաց ոսկե տեսիլք հայրենիքը՝ վեհանիստ Արարատն ու Արագածը, անուշ Երեւանը, ոսկե երազ Ոսկեվազը, ձկնառատ Շաղվարդն ու Քասախը, երեքհազարամյա «Բերդի գլուխ» հնավայրը, պաղպաջուն Սուրբ Աղբյուրը, մեղրաբույր խաղողն ու գինին... Որ մեկն էլ հիշի՝ սիրտը մրմռում է տիեզերածավալ կիզող կարոտից...

Ծանր էր անցնում դատապարտյալի՝ նրա ժամանակը. ահալից օրեր, ամիսներ, տարիներ... Հոգնատանջ, ընդարմացած մարմինը, ցավերից անվերջ տնքացող մկանները, թեկուզեւ նառի չոր տախտին, գոնե փոքր-ինչ հանգիստ էին առնում գիշերվա քնի ընթացքում: Քուն ասածը, իհարկե, չկար, մղձավանջն էր՝ իրական եւ անիրական մռայլ աշխարհների հոգեմաշ թնջուկ: Սակայն, որպես պայծառ լուսաստղ Գեղամի հոգու մթին երկնքում, երբեմն-երբեմն քաղցր անուրջի ու բիրտ իրականության սահմանագծում, աչքին էին գալիս բնօրրանի լուսավոր հիշողություններ ու պատրանքներ եւ նրա տրորված սրտին երանավետ առկայծումներ բերում: Մանավանդ երջանկանում, վերազարթոնքի կենսավետ խաբկանք էր ունենում, երբ երազին էին գալիս իր կարոտյալ զավակները, սիրած կինը... «Երեւի հիմա բալեքս հասել, արդեն պսակվելու են դարձել»,– անցնում էր սեւեռուն մտքով, եւ այդ պահերին հարթվում, չքանում էին նրա դեմքի՝ Սիբիրի ծնունդ խորշոմները, հետո թեւքով սրբում էր աչքերում լճացած երջանկության անուշ թախծի արցունքները...

Սիբիրյան գեհենում, երազում թե արթնի, չէր կարող չմտաբերել եւ ջուրվար Թաթոյի Համոյին: Նա, ով իր իսկ կռվարար բնավորության, չարության, չկամության ու բանսարկության զոհը դարձավ՝ այսպես թունավորելով նաեւ իր՝ հողի արդարհոգի մշակ, ռանչպար մարդու խաղաղ կյանքը...

Թե գյուղում առաջին աքլորականչից էր արթնանում, այստեղ՝ բանտապանի բանալու շրխկոցից ու դռան ճռինչից: Եվ բացվում, սկսվում էր տաժանելի նոր օրը՝ անկանխատեսելի ընթացքով, նորանոր... մահերով...

Իբրեւ այր անընկճելի եւ կենսասեր՝ Գեղամն անվհատ նետվում էր ընդառաջ նոր օրվա մարտահրավերներին՝ պայքարի ու գոյատեւման...

Շարունակելի

Սերժ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Աստվածաշունչը՝ աղքատների մասին

➥ էջ 2, 4

Սուրբ հայրապետը երբեք ճաշի չէր նստում առանց աղքատների, կույրերի, անդամալույծների ու ցավագարների՝ անձամբ սպասավորելով ու դարմանելով նրանց: Մեր պատմիչների երկերը, Վարք սրբոցները լի են նմանօրինակ եւ աստվածահաճ գործերի նկարագրություններով. «աղքատ» մակդիրով կնքվել են բազմաթիվ իշխանիշխանուհիներ, պաշտոնյա այրեր եւ վեհանձն տիկնայք: Այսօր, բարեբախտաբար, որբանոցներ ու ծերանոցներ կան, որոնք, սակայն, դեռ շատ կարիքներ ունեն: Անկելանոցներ ու աղքատանոցներ, դժբախտաբար, չունենք. մեր երկրում անօթեւան շատ մարդիկ կան, որոնք աղբանոցից են իրենց սնունդը հայթայթում: Չկան բավարար չափով անվճար ճաշարաններ: Եթե այս պահին հնարավոր էլ չէ անվճար հիվանդանոցներ հիմնել, գոնե կարելի է բարեգործական հիմնադրամներ ստեղծել աղքատ հիվանդների համար, ինչպես ընդունված է քրիստոնյա Արեւմուտքում եւ հրեական աշխարհում: Ընդ որում՝ Արեւմուտքում գործում են տեղական (մունիցիպալ) անվճար հիվանդանոցներ, որտեղ մասնագիտական պարտադիր ծառայություն պետք է մատուցեն նաեւ ամենաթանկ հիվանդանոցների հեղինակավոր բժիշկները: Մի՞թե սպորտը կամ մյուս զվարճություններն առավել կարեւոր են Գյումրիի, Արցախի, Երեւանի տնանկ, անօթեւան ու սոված մարդկանց՝ փոքրիշատե արժանավայել ապրելու իրավունքից: Եվ սա միայն պետության կամ առանձին նախարարությունների, հարուստ հիմնարկների, բանկերի մենաշնորհը չպետք է լինի, այլ՝ բոլորիս, քանզի.

«Երանի նրան, ով մտածում է աղքատի ու տնանկի մասին.

փորձանքի օրը Տերը կփրկի նրան:

Տերը կփրկի ու կպահպանի նրան, երանելի կդարձնի երկրի երեսին եւ չի մատնի նրան իր թշնամիների ձեռքը:

Տերը նրան կօգնի տառապանքի մահճում եւ նրա անկողինն ամբողջովին կմաքրի իր հիվանդությունից» (Սաղմ. Խ 1–4):

«Արծաթը ծախսի՛ր եղբոր եւ բարեկամի վրա եւ մի՛ թող, որ ժանգոտվի քարի տակ ի կորուստ:

Քո գանձն օգտագործի՛ր համաձայն Բարձրյալի պատվիրանների, եւ դա քեզ օգուտ կլինի ոսկուց ավելի:

Ողորմությո՛ւն հավաքիր քո շտեմարաններում, եւ այն կփրկի քեզ զանազան չարչարանքներից,

Թշնամու դեմ կճակատի քեզ համար հզոր վահանից եւ ծանր նիզակից ավելի» (Սիրաք ԻԹ 13–16):

Եվ վերջապես՝ «....անողորմ դատաստան է լինելու նրա հանդեպ, ով ողորմած չի եղել. քանզի ողորմածությունը բարձրագլուխ պարծենում է դատաստանի դիմաց» (Հակ. Բ 13):

Գրիգոր ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Արփինե Չանթիկյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստորագր. տպագր. 14.12.2022 թ.
Տպաքանակը՝ 1225